

Երեսնամյա այսպիսի

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՍԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկա գտնվեց գոհված սրայի հուղարկավորության արարողությանը

«Չերոսաբար նահատակված մեր սպաներն ու զինվորները անմահ են իրենց ծառայության սխրամբով»
Գարեգին Բ Կաթողիկոս

Նույսի 16-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանի եւ Մայր Աթոռի միաբանների ուղեկցությամբ այցելեց «Եռաբլուր» զինվորական պանթեոն, ուր նախագահեց Տավուշում հայ-ադրբեջանական սահմանին տեղի ունե-

Չայոց քաջարի բանակը բացառիկ խիզախությամբ, նաեւ թանկ կորուստների գնով շարունակում է անառիկ պահել աստվածապարզեւ մեր երկիրը: Այս անցկուն ոգով է դարձել շարունակ մեր ժողովուրդը պաշտպանել խաղաղ ու ապահով ապրելու իր արդար իրավունքը, հայրենի հողում արարել ու հարատւել: Վճռական եւ օրհասական պահերին ազգիս նվիրյալ զավակները անձնագոհության մեծագույն առաքինությամբ են իրագործել քրիստոսանմանության սխրանքը, քանզի առաքյալի խոսքի համաձայն՝ «չկա ավելի մեծ սեր, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար» (Հովհ. ԺԵ 13):

Սիրելիներ, Հայոց բանակի մեր զորական զավակների սխրանքը պատմության ընթացքում ծնել է հերոսության բացառիկ օրինակներ, որոնք այսօր էլ արձանագրվում են որպես մեր փառապանծ հայրերի քաջագործություններին հավատարիմ ոգու դրսևորումներ: Բազում փորձությունների առաջ մեր ժողովուրդը միասնականությամբ, առ հայրենին սիրո, հանձնառության ու զոհողության մղումով է ամուր բռնուցք դարձել եւ խորտակել թշնամիների հարվածները, հաղթել չարին, քանզի հավատացել է, որ «օրհնյալ Տերն է իր ապավենը, օգնականն ու փրկիչը» (հմմտ. Սաղմ. ԾԽԳ 1-2): Մենք խաղաղության ջատագով ժողովուրդ ենք, բայց մե-

կրնդմիշտ մերժել ենք մեր ազատության եւ ինքնության դեմ սանձազերծվող ոտնձգությունները: Եվ մենք քաջ գիտենք խաղաղության արժեքը, որ սրբագործված է մեր սրբազան հայրենիքի ու մեր անկախության համար իրենց կյանքը զոհաբերած հայրդիների քրտին-

քով ու արյամբ: Մեր սերն ու խոնարհումն ենք բերում հայրենիքի պաշտպանության համար իրենց կյանքը տված քաջարի մեր զավակների հիշատակի առջև: Աղոթում ենք երկնավորին, որ մեր բանակը շարունակի մշտադիմաց իր առաքելությունը՝ ի խնդիր հայրենի մեր պետության սահմանների անսասանության եւ հայրենաբնակ մեր ժողովրդի խաղաղ ու ստեղծագործ կյանքի ապահովության:

Այսօր միասնական աղոթքով հայցենք, որ Ողորմածն Աստված երկնքի արքայության հանգրվաններում հանգստություն եւ երանություն պարգևի մեր ազգի արժանավոր զավակների՝ Գարուշ



ցած մարտական գործողությունների ընթացքում գոհված մայր Գարուշ Համբարձումյանի հուղարկավորության արարողությունը:

Եկեղեցու կարգից հետո Վեհափառ Հայրապետն իր վշտակցության խոսքն ուղղեց արարողությանը մասնակից ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին, պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանին, գոհված սպայի սզակիր ընտանիքին, հարազատներին եւ ողջ մեր ժողովրդին:

«Հայաստանի Հանրապետության մեծարգո Վարչապետ,

Պաշտպանության մեծարգո Նախարար, Սզակիր ընտանիք ու հարազատներ,

Սիրելի հավատավոր զավակներ մեր,

Այսօր աղոթական հոգով մեր քայլերն ուղղել ենք դեպի Եռաբլուրի բարձունք՝ հրաժեշտ տալու հայրենիքի պաշտպանության սուրբ գործին իր կյանքն ընծայած մեր ժողովրդի քաջազուն զավակին՝ Գարուշ Համբարձումյանին: Մեր աղոթքներում են նաեւ գոհված նրա զինակից ընկերներ Սոս Էլբակյանը, Սմբատ Գաբրիելյանը եւ Գրիշա Մաթեոսյանը: Աղոթեցանի հերթական սաղարանի հետեւանքով այս օրերին մարտական գործողություններ են ընթանում մեր հայրենիքի սահմաններին: Խաղաղ բնակավայրերի հրետակոծմամբ Աղրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը աշխարհում համավարակի այս բարդ իրավիճակում կրկին փորձում է զենքի ուժով շրջանցել խաղաղ ճանապարհով հակամարտությունը կարգավորելու ողջամիտ հնարավորությունը:



Համբարձումյանի, Սոս Էլբակյանի, Սմբատ Գաբրիելյանի եւ Գրիշա Մաթեոսյանի լույս հոգիներին եւ Սուրբ Հոգու բյուր շնորհներով մխիթարի եւ սփոփի սզակիր սրտերը զոհվածների ընտանիքների, հարազատների, զինակից ընկերների եւ բոլոր վշտացյալների:

Հայոց եկեղեցու հոգեւոր դասի անուկից Մեր վշտակցությունն ենք բերում մեր ողջ ժողովրդին եւ սզացյալ ընտանիքներին: Սիրելիներ, դուք միայնակ չեք ձեր կորստյան ցավի մեջ, ձեզ հետ է ձեզ վշտակից մեր ողջ ժողովուրդը: Սակայն ամենքիս մխիթարությունն են մեր հայրենիքի անվտանգությունն ու խաղաղությունը, նրա յուրաքանչյուր զավակի ապահովությունը: Չերոսաբար նահատակված մեր սպաներն ու զինվորները անմահ են իրենց ծառայության սխրամբով: Եվ նրանց անմեղ հոգիները երկնքի արքայության մեջ պիտի վայելեն Աստուծո սերն ու գթառատությունը, Ով ապավեն է Իր Սուրբ Անվանը հավատացողներին:

Մեր հայցն է առ Երկնավոր Տերը, որ Իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքո պահպանի Հայաստան եւ Արցախ հայրենի մեր երկիրը, աշխարհասփյուռ մեր ժողովրդին, մեր բոլոր զինվորներին եւ միշտ պարգևի զորություն ու հաղթություն:

Աղոթք եւ օրհնություն վասն հավատո եւ վասն հայրենյաց գոհված մեր խիզախ զավակների լույս հիշատակին:

Յիշեսցէ Տեր, զհոգիս նորոգ ննջեցելոց եւ հանգուցէ զմոսա ի լույս երեսաց Աստուածութեան Իւրոյ. Ամէն»:

Եկեղեցիների համաեւարհային խորհուրդը հանդես է եկել հայսարարությամբ

Վերջին օրերին հայ-ադրբեջանական սահմանին Ադրբեջանի կողմից սանձազերծված ռազմական գործողությունների, խաղաղ բնակավայրերի հրետակոծման եւ լարվածության հրահրման առիթով՝ հուլիսի 16-ին Եկեղեցիների համաշխարհային խորհրդի (ԵՀԽ) գործող գլխավոր քարտուղար հայր Իոան Սաուկան հանդես է եկել հայտարարությամբ:

«Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը հորդորում է շտապ դադարեցնել հայ-ադրբեջանական սահմանին հակամարտության սրացումը, որը կիրակի՝ հուլիսի 12-ից խլեց առնվազն 16 մարդու կյանք եւ հանգեցրեց ապակայունացման՝ սպառնալով վերաճելու լայնամասշտաբ հակամարտության:

ԵՀԽ-ն խորապես անհանգստացած է առկա զեկույցներով, որոնց համաձայն՝ փոխադարձ հրետակոծությունների հետեւանքով քաղաքացիական անձեր են տուժել եւ քաղաքացիական կարեւոր ենթակառուցվածքներ՝ ներառյալ կո-րոնավիրուսի համավարակի դեմ անձնական պաշտպանիչ միջոցներ արտադրող Հայաստանի Տավուշի մարզի գործարանը:

Սանձավորապես մոր կորոնավիրուսի համավարակի այս իրավիճակում, որը ներազդել է նաեւ Հայաստանի ու Ադրբեջանի վրա, ԵՀԽ-ն հորդորում է երկու կողմերին՝ հետեւելու ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի համընդհանուր հրադարարի կոչին՝ հնարավորություն տալով անհ-

րաժեշտ բոլոր միջոցները տրամադրելու համավարակի դեմ պայքարին: Մինչ Հայաստանը պատրաստակամություն է հայտնել հետեւելու համընդհանուր հրադարարին, ԵՀԽ-ն ցավով արձանագրում է, որ Ադրբեջանը չի հետեւում դրան»,- ասված է հայտարարության մեջ:

ԵՀԽ-ի գործող գլխավոր քարտուղարը նաեւ անդրադարձել է ԵԱՀԿ-ի միջնորդական առաքելությանը եւ ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահների ջանքերին՝ կոչ ուղղելով կողմերին՝ վերսկսելու դիվանագիտական ջանքեր գործադրել՝ երկու ժողովուրդների միջեւ հակամարտությունը հանգուցալուծելու նպատակով:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղե-

ցին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը 1962 թվականից անդամակցում են աշխարհի ամենամեծ համաքրիստոնեական այս կազմակերպությանը՝ 350 անդամ եկեղեցիներով եւ ավելի քան 500 միլիոն քրիստոնյաներով:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իր մշտական ներկայացուցիչներն ունի կազմակերպության ղեկավար մարմիններում՝ Կենտրոնական եւ Գործադիր հանձնախմբերում, աստվածաբանական կարելուրագույն՝ «Հավատ եւ Կարգ» հանձնախմբում, Կրթության եւ էկոլոմեմիկ դաստիարակության, Ավետարանության եւ քարոզչության, Միջկրոնական երկխոսության եւ այլ հանձնախմբերում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց ՀՀ ՊՆ կենսորոնական զինվորական հոսպիսալ



«Այսօր յուրաքանչյուրն իր հերթին զինվորազորված է մեր երկրի մղած արդար պայքարին»

Գարեգին Բ Կաթողիկոս

Նույնիս 21-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց ՀՀ պաշտպանության մա-

Նորին Սրբությունը եղավ տարբեր բաժանմունքների հիվանդասենյակներում՝ հայրապետական իր օրհնությունն ու շուտափույթ ապաքինման բարեմաղթանքները բերելով մերօրյա հերոս զինվորներին:

Իր աղոթքը հնչեցնելով յուրաքանչյուր զորականի բժշկության համար՝ Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց հայորդյաց քաջա-



Ինչպես այսօր դուք, նաեւ ապագա սերունդները պիտի գիտակցեն, որ Հայրենիքն է մեր ուժը, զորությունն ու գոյության երաշխիքը»,- ընդգծեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ հայցելով Աստծո Աջի հովանին Հայոց բանակին, սպայական կազմին եւ զինվորներին, որ շարունակեն իրենց քաջագործություններով հպարտություն պարգևել մեր ժողովրդին:

Վատահաբար ոգետրում եւ խանդավառում է յուրաքանչյուր հայորդու:

Հայրապետը բոլորին ընծայեց սուրբ Գրիգոր Նարեկացու աղոթամատյան եւ մանրանկարներով տերուական խաչեր:

Այցի ընթացքում Նորին Սրբությունը զրույց ունեցավ հոսպիտալի բուժանձնակազմի հետ՝ իր գնահատանքը փոխանցելով մրանց մատուցած



խարարության կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ՝ տեսակցելու վերջին օրերին Տավուշում՝ հայ-ադրբեջանական սահմանին ռազմական գործողությունների ընթացքում վիրավորում ստացած զինծառայողներին:

ՀՀ ՁՈՒ հոգեւոր առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանի, ՀՀ ՁՈՒ ռազմաբժշկական վարչության պետ Սահակ Օհանյանի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի տնօրեն Արմեն Զարչյանի ուղեկցությամբ եւ հոսպիտալի ղեկավարության առաջնորդությամբ

րի ոգին, որի շնորհիվ մեր ժողովուրդն ապրում է խաղաղության մեջ, ապահովության զգացումով:

«...Մեր խոնարհումն ենք բերում ձեզ: Ձեր սխրագործությունները պիտի հիշվեն մեր ժողովրդի պատմության բոլոր ժամանակներում: Ձեր սխրագործություններով սերունդներ պիտի կրթվեն ու դաստիարակվեն: Այդ սերունդներն են, որ պիտի հասակ առնեն մույն ոգով, նվիրումով եւ մույն համընթացությամբ գիտակցությամբ պիտի իրենց ծառայությունը բերեն մեր Հայրենիքին:



Վեհափառ Հայրապետը նաեւ հավելեց, որ Հայոց եկեղեցին եւ ողջ ժողովուրդն այսօր աղոթքով զորավիգ ու աջակից են հայրենյաց պաշտպաններին. «Այդ բարձր գնահատանքի, երախտագիտության զգացումն ունի ոչ միայն հայրենաբնակ մեր ժողովուրդը, այլեւ Սփյուռքի հայությունը: Այսօր յուրաքանչյուրն իր հերթին զինվորազորված է մեր երկրի մղած արդար պայքարին՝ դուք՝ սահմանի վրա, մրանք՝ իրենց բնակության վայրերում: Դուք մեր ոգի ներշնչեցիք մեր ժողովրդին, հաղթության ոգի, եւ ձեր՝ առ հայրենին սերը

կարելու ծառայության, նվիրումի եւ մեծ ջանքերի համար՝ ի նպաստ զինծառայողների առողջության վերականգնման:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ այցելեց կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալի մատուռ, ուր աղոթք բարձրացրեց հայրենի երկրի խաղաղ ու անվտանգ կյանքի համար:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգի

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿԻ ԴԱՐՉԱԼԵԾԷՆԵՐԸ

Սկզբը՝ թիվ 11–13

Դարձվածքային միավորներն իրենց կազմում ունենում են հիմնական իմաստն արտահայտող եւ գործնականում ամբաժանելի բառ-միավորներ, որոնք կարող են ունենալ տարբեր խոսքիմասային պատկանելություն: Մեր հետազոտության ընթացքում բնագրից դուրս ենք բերել մակբայ, գոյական, ածական եւ բայ խոսքի մասերին պատկանող գերադաս անդամներով դարձվածքներ: Ընդգծենք, որ բայական դարձվածքները գերակշիռ մեծամասնություն են կազմում:

Բերենք մի քանի օրինակ.
— մակբայական՝ **յաւիտեանս յաւիտենից** (366) — հավերժաբար, **ակամայ կամաւ** (12) — անկախ կամքից,
— գոյականական՝ **արեգակն արդարութեան** (264) — արդարության արեգակ,
— ածականի արժեք ունեցող ենթակայական դերբայով՝ **պատրանաց պատրող** (364) — խաբեբա, հմուտ սրիկա,
— բայական՝ **ի մտի դնել** (254) — մտադրվել, **տալ կերակուր սրոյն** — սրի մատնել եւ այլն:

Դարձվածքների գերադաս անդամների բառային նշանակության միջոցով էլ հնարավոր է առանձնացնել այն իմաստային դաշտերը, որոնց միավորներն ավելի հաճախ են դարձվածքներ ստեղծում, այսինքն՝ ունեն դարձվածաստեղծներում: Ժամանակակից հայերենի դարձվածքների վիճակագրության տվյալների հիման վրա Պ. Բեդիրյանը եւ Ե. Գեւորգյանը առանձնացնում են այն հիմնական իմաստային դաշտերը, որոնց պատկանող բառերն արդի դարձվածքներում ամենակիրառականն են (*Տես Բեդիրյան Պ., նշվ. աշխ., էջ 91–92, Գեւորգյան Ե., Հայերենի դարձվածքները, Եր., 1969, էջ 91–99*): Իմաստային դաշտերի այս դասակարգումը բնորոշում է լեզվակիր հանրույթի աշխարհընկալման առաջնահերթությունները. ժամանակի հետ դրանք փոփոխվում են (*Տես Դիւբարյան Ն., «Պատմութիւն եւ խրատը խիկարայ Իմաստնոյ» երկի հայկական խմբագրության դարձվածքները, Զահուկյանական ընթերցումներ, 25–30*):

Հ. Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց» աշխատությունից առանձնացված դարձ-

վածքների իմաստաբանական դասակարգումը հետաքրքիր օրինաչափություններ է բացահայտում: Դիտարկելով պետք է արձանագրել, որ այստեղ ակնհայտ գերակայում են գեների եւ ռազմական գործի, մարմնամասեր եւ ֆիզիկական գործողություններ արտահայտող իմաստային դաշտի բառերից կազմված կապակցությունները: Տվյալ իրողությունն ուղղակիորեն բացատրվում է եւ Դրասխանակերտցու ապրած ժամանակաշրջանով, եւ երկի բովանդակությամբ:

Ձեռք եւ ռազմական գործ նշանակող բառերից կազմված ԴՄ-ներ

Բերենք գեների եւ պատերազմի իմաստային դաշտին պատկանող բառերից կազմված դարձվածքների խորհրդանշական օրինակներ, որոնք հաստատում են այն ճշմարտությունը, որ հին եւ միջին դարերի ամենաժամանակավոր հայտնագործությունը սառը զենքն էր: Այս ժամանակաշրջաններում ի հայտ եկան

տարբեր զինատեսակներ, որոնք կործանարար դեր ունեցան հետագա ներազգային եւ միջազգային հակամարտություններում, բայց եւ միաժամանակ յուրովի հարստացրին լեզուների բառապաշարը տարբեր դարձվածային միավորներով: Այս խմբին պատկանող դարձվածքների գերակշիռ մասը կազմված է «սուր» եւ «զենք», «հուր» գլխաբառերով դարձվածքներից, դարձվածաստեղծներում ունեն նաեւ «պատերազմ» եւ «մարտ», «նետ» բառերը: Բնորոշ է, որ այս իմաստային դաշտի դարձվածքներում **սուրը** հաճախ զուգորդվում է **հուր** եւ **գերություն** բառերի հետ. սուրը պատերազմի խորհրդանշան էր, այն բարձրացնելը՝ հրադադարի նշան, իսկ **հուրը, հրդեհը**՝ պատերազմի եւ ավերման միջոց: Դրասխանակերտցու երկում ռազմի եւ կոտորածի իրողություններ արտահայտող 20-ից ավելի դարձվածքներ ենք գտել, բայց դրանց զգալի մասը հոմանշային հարաբերության մեջ են գտնվում, հատկապես **սուր** կամ **արիւն** բաղադրիչով կազմվածները:

Շարունակությունը՝ էջ 5, 7

Արեւմտահայոց խաչելության պատումը



Սկիզբը՝ թիվ 8–13

Վեպում հանդես են բերված մի շարք գերմանացի գործիչներ՝ դիվանագետներ, քաղաքագետներ, զինվորական կցորդներ, հասարակական ու կրթական ասպարեզի ներկայացուցիչներ: Նրանցից շատերը գերմանական շահերի տիպիկ պաշտպաններ են, անգամ՝ սադրիչներ: Այդ համապատկերում առանձնանում է Ֆայմ-բերգը, որը, *ինկոգնիտո* (անճանաչ) կերպով ժամանելով Ստամբուլ եւ հանձնարարություն ունենալով կազմակերպել ԲԲԲ-ի աշխատանքները, ժամանակի ընթացքում շփվում է հայերի ու հայկական խնդիրների հետ եւ խորանալով ու հասկանալով հայ ժողովրդին վիճակված կյանքը՝ Ստամբուլից հեռանում է վերափոխված, ոչ *ինկոգնիտո*՝ այս անգամ ճանաչած թուրքական հայատյաց քաղաքականության ողջ նենգությունը:

Հայասեր գերմանացու մի ուրիշ կերպավորում է Բերթան Գինդի կինը, որ ազնիվ նպատակներով եկել է Թուրքիա եւ մանկավարժական գործունեություն է ծավալում: Լինելով ազնիվ հոգի ու կրթված անձնավորություն՝ նա շատ շուտ է հասկանում իր հայրենակիցների շահադիտական նպատակներն ու հեռուն գնացող քաղաքական ծրագրերը: Բերթան սիրում է Գինդին, նրանից երեխա ունենում, մի պահ անգամ

մտածում իր ամուսնուն Գերմանիա տանել ու դրանով փրկել նրա կյանքը: Սակայն միեւնույն ժամանակ հասկանում է նաեւ, որ հայ ժողովրդի համար օրհասական այդ շրջանում Գինդին իր ժողովրդից չպիտի բաժանվի ու պարտավոր է նրան ծառայել մտքով ու հոգով, գործով ու զենքով, ինչպես նրա ազգակիցներից շատերը, ինչպես նրա ժողովուրդը:

Թեեւ հերոսաբար մարտնչում են ֆուդի-ճաքցիները, սակայն այդպես էլ չի լինում *«փառաբանութիւնն Աստծո եւ հերկիր խաղողութիւն, ի մարդիկ հաճութիւն»*:

Դատարկվում է Կիլիկիայի ինքնապաշտպանության վերջին հենարաններից մեկը, ու այլեւս Դրազարկի դպրեվանքը սաներ չէր ընդունելու, Թորոս իշխանի գերդաստանի աշյուններին այցելողներ չէին լինելու, մոռացվելու էին Ռուբեն եւ Հեթում թագավորների դամբարանները, հայոց կաթողիկոսների՝ Գրիգոր Տղայի, Գրիգոր Քարավեժի, Հովհաննես Մեծաբարոյի ու Կոստանդին Բարձրաբերդոցու սրբատեղիներում աղոթողներ չէին լինելու: Չէին տոնվելու խաչվերաց, Աստվածածնի, Հարություն ու այլ տոները, որ ժողովրդի ու երկրի ապրելու առիթավառներն էին: Սրբացած այդ հողերի վրա պիտի իջնեին խոշոր ցիւներ, ուրուրներ ու անգղներ, երկիրը մնար մարդակերպ բորենիներին: Ավերման մեջ մնացին նաեւ Տիգրանակերտի սրբավայրերը, կիլիկյան իշխանների ապարանքները, խոշաբ գետի եզրին կառուցված Անգղ վանքը, Վասպուրական աշխարհի հայրուհի ուխտատեղիներն ու մենաստանները, Տարոն աշխարհի եկեղեցիները, Խարբերդի մատուռները...

Ինչ-որ կերպ, ինչ-որ չափ Ալաջաջյանի այս վեպը այդ աշխարհի ու այդ ժողովրդի արարող ոգու ու ազատասիրության պատմությունն է մեզ ներկայացնում, այդ ամենի այրման ու ոչնչացման պատմությունը, բայց ամենից առավել՝ արեւմտահայության հուսալքող դիմադրության վառ էջերից մեկը, որովհետեւ եթե չգրվեր այս վեպը, քչերը

պիտի տեղեկանային Ֆուդիճաքի իրական հերոսամարտի մասին:

Վեպի վերջնամասերում Ալաջաջյանը կերտել է մի պատկեր՝ ջութակի աղեղի սահուն լարերի վրայով ու հնչեցումը Շոպենի «Յայգային» նուկտյունի: Տխրության ու կարոտի այդ մեղեդին անլուր թախծի հեկեկոց է պարունակում իր մեջ, որն այնքան հարիր է վեպի շատ հերոսների ֆիզիկական ու հոգեկան անդամալի կորուստներին՝ *«Ետ արի...»*: Բայց այլեւս ոչինչ չէր մնացել, ու ոչ ոք չէր մնացել ետ գալու համար: Ամեն ինչ ամայացած էր ու ավերված: Եվ որեւէ խնդրաբեզ չէր կարող այդ ամենից մշխարք իսկ ետ բերել: Պատերազմի օրերին գերմանական պաշտոնական թերթերը վկայում էին, որ Թուրքիայում հայերի թիվը երկուսուկես միլիոնն անցնում է: Ի՞նչ եղան այդ մարդիկ: *«Ետ արի...»*, որտեղից, ո՞ր... Բայց կար ու պիտի մնար մի երգ, որ ընդգծման ու կռվի երգն էր, որը եւ Ալաջաջյանի այս վեպում լսվում է որպես անլուր ու անճկելի մեղեդի՝ հավերժացնելու համար բոլոր նրանց կյանքն ու գործը, ովքեր հայրենական հողերի վրա հնչեցրին պայքարի անմարելի *«նուկտյունը»*:

Այս վեպը չի գրվել այդ մարդկանց վերադարձնելու համար: Գրվել է, որ այլեւս չկատարվի այն, ինչ տեսան ու ինչի մեջ ապրեցին նրանք, ավելի ստույգ՝ *չապրեցին* նրանք: Ու նաեւ այն բանի համար, որ մեծ տերությունները չշարունակեն դավել իրենց շահերի համար, իսկ մարդասպան իշխանություններն ու ժողովուրդները դադարեցնեն արյան իրենց ծարավը: Եվ ուրեմն՝ Ալաջաջյանի գիրքն իր ամբողջության մեջ հնչում է նաեւ որպես դատապարտանքի խոսք ամեն մի պատերազմի ու սպանդի: Չէ՞ որ բոլոր ժամանակներում էլ կռվող կողմերը զոհերն են իշխանություններում գտնվող արյունախում մարդկանց շահերի ու գաղափարների: Եվ ինչպես գրում է հեղինակը, ով է թաղում նրանց, եւ ով հիշում, եւ ով է բուժում ժողովուրդների վերքերը: Միակ իրականը միշտ էլ հազարավոր

թաղումներն են մնում. *«Թաղում՝ առանց արարողության, անարցունք, առանց հարազատ ձեռքերի, անձանոթների ձեռքով. անձանոթներ, որոնք թաղում են անձանոթների, անձանոթ զինվորի շիրիմներ՝ անձանոթ տխրության ներքո»* (Ալաջաջյան Ստ., Չսպիացած վերք, հ. II, գիրք 3-րդ, էր., 2019, էջ 435):

Այս գիրքը նաեւ մարդ արարածի մասին է ու պետությունների, արդարության ու հանցագործության մասին: Այն մասին, թե ինչպիսին չպիտի լինել եւ ինչպիսին պիտի լինել: Հարց, որ միայն հայ ժողովրդին չի վերաբերում, այլեւ ողջ մարդկությանը, որի կատարած փոքր ու մեծ սպանդները, շահադիտական ու ազգայնամուլական գործունեությունները առթեցին բալկանյան պատերազմները, որն իր հերթին ծնեց Առաջին համաշխարհային պատերազմը, որն էլ պիտի նախապատրաստեր Երկրորդ համաշխարհային պատերազմը:

«Պահեմ եւ պահպանեմ»:

Այս վեպը նաեւ մի աղոթագիրք է առ *«պահպանումը»*... բոլոր ընկածների, բոլոր հայ նահատակների, որ տարածված են գաղթի ճամփաներին, բողոք է բոլոր այն մարդասպանների դեմ, որոնք ծաղկած մի երկիր դարձրին արյան ծով: Ու նաեւ հաստատումն այն բանի, որ թուրքերը *անապրելի աշխարհ* դարձրին այն երկիրը, որ հայ սերունդների ձեռնակերտած դրախտն էր:

Վեպն ընթերցելուց հետո ավելորդ է դառնում հարցնել ինչպե՞ս եղավ: *«Այսպես եղավ»*. ասում է Ալաջաջյանը, ու նաեւ պատասխանում, թե ինչ ամեն, որ ոստիը այլեւս չհամարձակվի սուր բարձրացնել հայի դեմ: Տեղին է մտաբերել վեպի գլխավոր հերոս Գինդի՝ իր թղթապանակում կատարած գրառումներից մեկը. *«...ոչ հայոց ամրոցները, ոչ հայոց բերդերը, ոչ հայոց եկեղեցիները չկարողացան պաշտպանել մեզ մեր թշնամուց: Մեզ պաշտպանեցին մեր գիրքը, դպրությունը, լեզուն, մշակույթը:*

Շարունակությունը՝ էջ 6, 8

Գյուղաշխարհի կյանքն ու կնոջ ազատագրությունն ինդիոր Ղ. Աղայանի «Երկու քույր» վեպում

19-րդ դարի երկրորդ կեսի արեւելահայ վիպագրության մեջ Ղազարոս Աղայանի «Երկու քույր» վեպը (1872 թ.) ժամանակաշրջանի հայ գյուղաշխարհին իր նահապետական կենսակերպի մեջ պատկերող լավագույն երկերից է: Բովանդակային տարաշերտությամբ առանձնացող այս երկը, որն օժտված է հարուստ բարբազությամբ, համրային կյանքում տեղ գտած ներքին օրենքների, կենցաղի, մարդկային հարաբերությունների բացահայտումներով, ներկայացնում է հարազատ եզերքի կյանքը՝ վեր հանելով իրականության մեջ տեղ գտած խնդիրները:

Ղ. Աղայանը հմտորեն է ստեղծել ժամանակի հայ գյուղի իրականությանը բնորոշ գեղարվեստական պատկերը, բարբերի ավանդականության եւ ազգային հոգեբանության նրբերանգներով ցույց տվել հայ կնոջ հոգսաշատ կենցաղը, նրա ճնշված ու իրավազուրկ վիճակը: Մարդկային հարաբերությունների, բարոյական արժեքների վրա ներգործուն ազդեցություն ունեին նահապետական աշխարհի քարացած օրենքները, իսկ հողաբաշխման անարդար պայմանները խարխուլել էին գյուղական համայնքի անդորրը: Ղ. Աղայանի գլխավոր մտահոգությունը հայ գյուղն էր՝ իր զարգացման բնականոն ընթացքը խոչընդոտող պատմեղներով: Գյուղական համայնքի սոցիալական շերտավորումը խորացնող, նահապետական բնական կյանքի անդորրը խախտող սեփականատիրական կիրքը, թշնամանքի պատճառ դարձած անարդար հողաբաժանությունն ու մարդու բարոյական անկումը վիպագրի համար դարձան անարդարության դեմ պայքարի եւ իրականության բացասական կողմերը ներկայացնելու միջոց:

Դեռեւս Խ. Աբովյանի երկերում նկատելի

էին նահապետական աշխարհի մուտք գործած մտահոգիչ խնդիրները, որոնք ավելի խորությամբ արտացոլվեցին Պերճ Պռոշյանի վեպերում: Աբովյանի, Պռոշյանի, Նալբանդյանի սկսած գաղափարական պայքարն իր արձագանքն ունեցավ նաեւ Աղայանի վիպական արձակում: Նալբանդյանը «Երկրագործությունը որպես ուղիղ ծանապարհ» ընդարձակ աշխատությունը նվիրեց գյուղի եւ քաղաքի տնտեսական հարցերի քննությանը: Գյուղական կյանքի համապատկերում Աղայանը ներկայացրեց գյուղացու մտահոգությունները, որոնք դարձան վիպական հյուսվածքի առանցքը: Ազգային ակունքներին մոտ գտնվող գրողը լավ գիտեր գյուղի կյանքն ու գյուղացու խնդիրները եւ վիպագրությունը ծառայեցրեց ժամանակի սոցիոմի առանցքային հարցերի քննությանը: «Գյուղացին մտավ գրականության մեջ, միայն նրա մի ճյուղի՝ վիպագրության մեջ: Երկար ժամանակ նրա դրությունը զբաղեցրավ գրականության մյուս ճյուղերը. բայց այս էլ մեծ բան էր, որ գրականությունը իր թելերը թափ տալուն պես հայտարարեց իրան ժողովուրդի համար եւ նրա կյանքը նյութը առավ» (Մուրճ, Թիֆլիս, 1897, թիվ 7–8, էջ 106),– գրել է Ն. Աղբալյանը:

Ղ. Աղայանի գեղարվեստական արձակի տարբեր դրսեւորումներում հեքիաթից մինչեւ վիպական տիրույթ, ընդգծվում է կնոջ ազատության, կրթության, աշխատանքի բնական իրավունքի խնդիրը: «Տարագ» շաբաթաթերթում տպագրած «Կնոջ կոչում» հոդվածում Աղայան գեղագետը ներկայացրեց կնոջ, նրա էության, առաքելության մասին իր տեսակետները. «Հա-



րագատ մոր հատկությունը միայն այն սիրալիր փայփայանքը չէ, որ տարածում է ամբողջ գերդաստանի վրա, այլեւ նրա տանտիրիկնությունը, ժրույթունը, տնտեսությունը, չափավորությունը, խնայողությունը, եւ որ մեծն է ամենից, աշխատասիրությունը» (Աղայան Ղ., Երկերի ժողովածու, հ. 3, Երեւան, 1963, էջ 37):

«Երկու քույր» վեպում գրողը խորությամբ է ներկայացրել գյուղաշխարհի կնոջ հոգեկան ապրումները, նրա ներգրգացումները՝ ցույց տալով նրա ճնշված վիճակն ընտանիքում, ինչպես եւ հասարակական կարծիքի

կործանարար ազդեցությունը նրա ճակատագրի վրա: Իր կենցաղի դժվարությունների եւ հոգսերի մեջ ապրող կինը դառնում է միջավայրի զոհը: Աղայանն առավելապես շեշտադրված ներկայացրեց հայ կնոջ ազգային դիմագիծն ու հոգեկերտվածքը: Իրար հակադրված երկու քույրերի՝ Մարիամի եւ Հերիքնազի կերպարներով գրողը ցույց է տվել իր հնազանդության մեջ դժբախտացած եւ ըմբոստության մեջ հնազանդ դարձած կանանց: Այս իմաստով «Երկու քույր» վեպը արեւելահայ արձակում հոգեբանական վեպի առաջին դրսեւորումներից է, ուր կնոջ՝ իրավազուրկ վիճակից դուրս գալու ժամանակավրեպ հարցը դարձավ գերխնդիր՝ հիմք դնելով հետագա ծավալումների: «Խեղճ կանայք, արդյոք զգում է՞ք դուք ձեր գերությունը, ձեր ստրկությունը: Իհարկե, ոչ: Կարծում եք թե այդ է ձեր վիճակն ու ճակատագիրը, որ դուք պիտի գառը լինիք, իսկ ձեր մարդիկ՝ գայլ: Մարդիկն էլ կարծում են, որ իրավունք ունեն ձեր կյանքի վրա, մոռանալով՝ որ ինչպես կյանք տալ կարելի չէ, եւ ոչ առնել կարելի է» (Աղայան Ղ., Երկերի ժողովածու, հ. 1, էր., 1962, էջ 232),– գրել է Աղայանը:

Ինչպես նախորդ՝ «Արություն եւ Մանվել» ինքնակենսագրական վեպում, այստեղ էլ վիպասանը գործողությունների ընթացքը ներկայացնում է մանկական հիշողությունների դաշտում: Պատումը վարողը հանդես է գալիս որպես իրադարձությունների ականատես: Աշխարհը երեխայի պատկերացումների դաշտում ներկայացնող պատմողն աստիճանաբար ընդլայնում է դեպքերի ծիրն ու շրջանակը:

Շարունակությունը՝ էջ 4

ՑՈՐԱԿԱՆ ՏԵՐՅԱՆԸ

Տերյանի ծննդյան 135-ամյակի եւ մահւոյան 100-րդ տարելիցի առիթով

Սկիզբը՝ թիվ 2–13

ԺԱ. Ընթերցողական լսարանը

Դասագրքերում Տերյանը բավարար ներկայացված է: Բավարար չեն համարում նրան եւ մյուս հեղինակներին հատկացվող ժամաքանակը: Սովորողը պետք է այնքան հմտություն ձեռք բերի, որպեսզի կարողանա տարբերակել մի գրողի լեզուն ու ոճը մյուսից, այնպես, ինչպես տարբերակում են մի երգչի ձայնը մյուսից, մի երգահանի ձայնակարգությունը մեկ ուրիշից, ասենք՝ Բեթովենին Բախից: Այդ տարբերակման հմտությունը ձեռք բերելու համար պարտադիր չէ շատ գործեր անցնել, պարտադիր է ճանաչել, հասկանալ եւ ընկալել գրողին, ընդհանրապես՝ ստեղծագործողին: Այս դեպքում կարծես առաջ է մղվում հայտնի ասույթը՝ գրողն իր ոճն է: Թեկուզ այդպես՝ կա ոճի լայն ու նեղ ըմբռնում: Նեղը լեզուն է, լայնը՝ ամբողջ գրողը՝ լեզվով, մյուսով, հերոսով, ամեն-ամեն ինչով: Ահա պետք է այնպես ներկայացնենք գրողներին, որ նրանք հասանելի, մատչելի ու սիրելի լինեն սովորողներին:

Դպրոցական ուսուցման համակարգում շատ կարեւոր է անդրադարձը ոչ միայն ստեղծագործողի գաղափարական համակարգին, այլեւ արվեստի հարցերին: Գաղտնիքն այստեղ է: Ուստի հարցի պատասխանը շարունակենք այդ անդրադարձով: Տերյանը կատարյալ է ամեն ինչում՝ անթերի է ոչ միայն լեզուն, այլեւ՝ կշռույթը, չափը, հանգը, այն ամենը, ուր բառն ու պատկերը դառնում են գեղարվեստական խոսք:

Մի առիթով այսպիսի դիտարկում է արել. «Մեզանում դուք կարող եք ցայսօր հանդիպել ռիթմի եւ չափի անհեթեթ ու տարօրինակ անըմբռնողության» (ԳԱԹ, Տերյանի ֆոնդ, 113): Այնքան նրբացված ու ճշգրտված էր նրա կշռույթային զգացողությունը, որ համապատասխանություն էր պահանջում եւ մյուսի, եւ չափի, եւ կշռույթի մեջ: Իր պահանջներին

համապատասխանող օրինակներով հայ պոեզիան առանձնապես հարուստ չէ: Պողոս Մակինցյանն իր հերթին ավելացնում է. «Թղթերում պահպանվել է մի տետրակ, որից տեղեկանում ենք, թե որպիսի ջանասիրությամբ նա ուսումնասիրում է բանաստեղծական ձեւերն ու տաղաչափական օրենքները» (Պ. Մակինցյան, «Դիմագծեր», 1980, էջ 136):

Տերյանը դարաշրջան բացեց բոլոր առումներով, նաեւ հայոց տաղաչափության մեջ՝ ամենակայուն ու անփոփոխ թվացող ասպարեզում իսկ ամրապնդելով մի նոր համակարգ: Հայոց տաղաչափությունն իր հիմքում վանկական է, ինչը պայմանավորված է հայերենում բառի շեշտի կայուն դիրքով վերջին վանկի վրա: Այս համանվագի կողքին Տերյանն ամրապնդեց վանկաշեշտական համակարգը, ուր կշռույթային դեր ունի ոչ միայն չափի գործոնը, այլեւ՝ շեշտի դիրքն ու քանակը: Տերյանը դարձավ վանկաշեշտական համակարգի հիմնադիրն ու անգերազանց վարպետը, որի նորամուծությունների ուղին շարունակեց Զարեմը:

Բանաստեղծ Վեսպերը ներկա է եղել Տերյանի երեսնյան դասախոսությանը: Տերյանն իր բանաստեղծությունները կարդալուց առաջ ասել է նախաբան խոսք եւ շեշտել, որ ինքը ջանացել է «հայ վանկային <...> պոեզիան դարձնել շեշտային» («Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում», 1964, էջ 334):

«Իմ երգերին» բանաստեղծությունը մտահոգություն է իր ստեղծածի ընդունելության մասին: Դրանք նա բնորոշում է «մեղեդիներ սգավոր» արտահայտությամբ: Սա, իհարկե, ակնարկ է Նաբեկացու մեղեդիներին: Սա նաեւ հենց իր պոեզիայի ճիշտ ձեւակերպումն է: Իր արվեստի եւ իր մասին ասույթի սեղմությամբ բանաձեւել է.

Թեթեւ էր արվեստն իմ՝ խնդում,
Իսկ կյանքն այնպես դժվարին էր,
Այնպես միշտ անօգ ու լռին էր,
Այնպես միշտ մոլար ու անտուն...

Շատ բազմազան է Տերյանի պոեզիայի գունային երփնագիրը: Ամեն ինչ տրամադրության խորհրդանշան է: Ըստ այդմ՝ շուշանն անգամ կարող է լինել սեւ, իսկ խավարը՝ ոսկեհուր: Իշխող են եւ մուգ, սեւ գույները, եւ լուսավոր, սպիտակ: Անպակաս է կապույտը: Ահա գունային անցումների մի պատկեր.

Եվ հայացքը ոսկեհուր
Մթնում իմ սեւ գիշերվա,
Իր անսահման, իր մաքուր
Լույսն է փռում իմ վրա:


Ոսկեհուր հայացք, սեւ գիշերվա մուգ, մաքուր լույս... «Պետերբուրգ» սոնետում ստեղծել է այսպիսի մի պատկեր, որ նաեւ գունային հավաստիություն է՝ «ցուրտ կրակներ», եւ այս հակադրությամբ ստեղծված պատկերը միանգամայն տեսանելի է հյուսիսային քաղաքի սառը մառախուղների մեջ:

Պատկերի միջուկ հանդիսացող շատ բառեր կան, երբ միջուկը ճեղքվում, ու պատկերն առկայծում է: Այդ միջուկ բառերից է նաեւ քամին, որ մարդկային կերպարանք է ստանում եւ ստեղծում այսպիսի պատկեր. «Քո սիրտն էլ արդյոք ցավում է, // Քամի՛, երբ լալիս ես խուլ...»:

Տերյանի արվեստի առանձնահատկություններից է իմաստակիր բառի ուժգնացումը ոչ թե էներգետիկայով, այլ ներգործման հանդիսավոր տեսականությամբ: Ինչպես՝ «Ինձ անլաց թաղեցեք, ինձ անխոս թաղեցեք, // Լուսինյուն, լուսինյուն, լուսինյուն անսահման...»:

Կամ՝

Բոլոր մարդոց մեջ,
Պաղ մարդոց մեջ,
Որպես տրտում
Անպատում—
Մենակություն,
Մենակություն...



Կամ՝

Եվ գթությունը քո քրոջական
Սիրտը կըլցնե խնդության լույսով,
Քո սուրբ ծնկները կըգրկեն հուսով
Եվ կրհեկեկամ, եւ կրհեկեկամ...

Շարունակությունը՝ էջ 6

Գյուղաշխարհի կյանքն ու կնոջ ազատագրություն խնդիրը Ղ. Աղայանի «Երկու քույր» վեպում


Սկիզբը՝ էջ 3

Դրանք զարգանում են կուռ ամբողջականությամբ եւ հաջորդականության գեղարվեստական հիմնավորումներով: Աղայանը վիպական զարգացման ընթացքը ներկայացնում է գործողությունների վերջից: Գրական երկերում հեղինակները դեպքերը ներկայացնում են ըստ նպատակահարմարության, երբեմն դրանց ժամանակագրական խախտմամբ, որով դիպաշարը կարող է ձեռք բերել ավելի նպատակահարմար ձեւ: Աղայանն սկզբում ներկայացնում է ամենավերջում կատարվածը, հետո անդրադարձ հայացքով մայրն ու մինչ այդ պատահածին:

Աղայանի գեղարվեստական մտածողությունը գերծ է կաշկանդումներից. ազատ մտածողությամբ նա երազատեսությունը դարձրել է պատկերավորման միջոց, նրանով կանխորոշել վիպական այս կամ այն իրողությունը: Արգունանի խորհրդավոր երազը դառնում է դիպաշարի դրամատիկ զարգացման ընթացքում հերոսին ուղեկցող կանխագուշակություն, որը նախապատրաստում է նաեւ ընթերցողին: Երազների պատկերումն այս տիրույթում դառնում է հերոսի նախապաշարումների, նրա ներաշխարհի ու հոգեբանության, ձգտումների ու մտածումների արտահայտման միջոց:

Կանխագուշակության դրսևորումները տեղ են գտել նաեւ Վարդավառի ծիսակարգային արարողության մաս կազմող վիճակահանության դրվագում: Ազգային տոների ներկայացումը, որոնցում ուշագրավ է ներդիր ժամերի՝ ժողովրդական խաղիկների ներկայությունը, հարստացնում է վիպական մյուսն ու գեղարվեստական պատկերը դարձնում առավել բնական ու տպավորիչ:

Նոր սկզբնավորվող հայ վիպագրության մեջ թեմատիկ առումով նորություն էր գյուղացու՝ հողի համար ծավալած պայքարի ներկայացումը: Ընչաքաղց մեծահարուստները կոպիտ ուժով, հողաբաժանության օրենքի բացահայտ



խախտումներով ձեռք էին բերում հարստության նոր աղբյուրներ՝ ունեզրկելով դառն աղքատության ճիրաններում հայտնված գյուղացիներին, որոնք այլևս չէին համակերպվում անարդարությանն ու արժանապատվության կորստին: Հողը գյուղացիներին բաժանվում էր տասը կամ տասնհինգ տարին մեկ, իսկ հողաբաշխման հիմքը ընտանքի անդամների թիվն էր: Տանուտեր Սարգիսը պատմում է, թե ինչպես թավաղները, սրան-նրան կաշառելով, տիրանում էին գյուղական համայնքի բոլոր բերրի հողերին: Նրանք իրենց նպատակներն իրագործում են չինովնիկների գործուն աջակ-

ցությամբ: Իսկ ցարական հրովարտակի իրականացումը անպաշտպան եւ միամիտ գյուղացիներին ենթարկում է կրկնակի ստրկացման:

Հասարակությունը մարդու առաջ դնում է խնդիրներ, եւ Աղայանի հերոսը փորձում է անհավասար հողաբաժանման հարցը լուծել: Արգունանը պայքարող աշխատավորի, ըմբոստ գյուղացու կերպար է, որին բնորոշ է պայքարի բնագոյ՝ արթնացած յուրաքանչյուր շահագործումից: Նրա, մյուս գյուղացիների ու ճարտարանց մթաթուսի դիսիպարաբություններով գրողը ներկայացնում է 19-րդ դարի 70-ականներին հայկական գյուղերում տիրող սոցիալական հակադրությունները: Վեպի գաղափարական բովանդակության մեջ գլխավորը գյուղացիների պայքարն է՝ հողի, սեփականության իրավունքի համար: Հասարակական չարիքի նախապատճառը Աղայանը համարում է սոցիալական անհավասարությունը եւ առաջ քաշում սեփականության արդար բաժանման խնդիրը: Գյուղի համայնակեցության համար օրինաչափ էր «խոփո սուր է, հանդը բաժանովի է» (Մույն տեղում, էջ 179) սկզբունքը:

Նկատելի է, որ հեղինակի կողմից նկարագրված սիրտ պատմությունն առաջին հայացքից է միայն բարոյական շարժառիթներից բխում. այն ընդամենը միջավայր է ստեղծում գլխավոր թեմայի՝ ժամանակի սոցիալական հարցերի արծարծման համար: Վեպի սոցիալական հիմքը ծավալվում է եւ զուգահեռվում հերոսների զգացմունքային դաշտին:

Անցյալի շեն կենցաղավարությանը հակադրվում է ներկայի թշվառությունը, որ բաժին էր ընկել Մարիամի եւ Հերիքնազի ընտանիքին: Նախկին հարուստ ու բազմամղան գերդաստանից մնացել են միայն երկու քույր, որոնց կործանման պատմությամբ Աղայանն ընդգծում է անցյալի ու ներկայի բախումը: Այս տեսանկյունից առանձնակի նշանակություն է ստանում նաեւ արդեն կիսավեր տան օջախը, որ կրում է երկու ժամանակների բախման կործա-

նարար փիլիսոփայությունը, գաղափարական ու հասարակական ընկալումների անհամապատասխանությունը: Անցյալում սրբության արժեք ունեցող օջախը, որի մոտ երգվում էին նորապսակները եկեղեցուց դուրս գալուց հետո (այստեղ ունենք *եկեղեցի-օջախ* պաշտամունքային զուգահեռ), այսօր վերածվել է ավերակի ու մոռացության մատնվել:

Կարծրացած համայնի մտածողությանը զոհ գնացած Մարիամը հանդես է գալիս որպես հոգատար քույր՝ բնագոյաբար մայրական քնքշություն ցուցաբերելով Հերիքնազի նկատմամբ: Մարիամի կերպարը Աղայանի համար դառնում է կնոջ էությունը, հոգեբանությունը բացահայտելու միջոց: Գրողը նուրբ թելերով բացում է նրա անձնական կյանքի ողբերգությունը: Շամիրի հետ հակառակ իր կամքի ամուսնացած Մարիամի համար անսեր այդ ամուսնությունը միայն ամուսնուն ենթակա լինել ու նրա կողմից շարունակաբար ծեծվել է: Միայնակ մնալու վախն ու հասարակական կարծիքի թելադրանքն էին այսկերպ կյանքի պատճառները. «Այս ամուսնությունը Մարիամի սրտով չէր, բայց մի անգամ որ ասաց հնազանդ եմ, էլ այնուհետեւ ոչինչ կարող էր անել» (Ղ. Աղայան, *Երկերի ժողովածու, հ. 1, Երեսան, 1962, էջ 176*):

Մարիամի կերպարը՝ որպես մարդկային բնավորություն, իրականությանը համակերպվող է, իսկ Հերիքնազն ավելի շեշտված, ուժեղ անհատականություն է՝ կյանքի հանդեպ իր ուրույն ձգտումներով եւ տեսակետներով: Մարիամը մայրական հոգատարությամբ էր վերաբերվում քրոջը եւ իր անձնական երջանկությունները զոհաբերում է հանուն նրա:

Հերիքնազն առաջին կին կերպարն է արեւելահայ արձակում, որը համարձակորեն փշրում է դարավոր ավանդույթի կապանքները՝ իր հարցադրումներում եւ երկխոսություններում հաստատելով կնոջ ազատության բնական իրավունքը:

Շարունակելի

ԱՆՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ԴԱՏԵՐԱԶՄՈՒՄ



Սկիզբը՝ թիվ 9–13

Խորհրդային բանակի 1943–1944 թթ. վճռական հաղթանակներում իրենց ավանդն ունեցան նաև օկուպացված Դրիմի, Զյուսիսային Կովկասի, Ուկրաինայի, Բելառուսիայի, Լեհիստանի մարզի, Մերձբալթիկայի եւ այլ շրջանների՝ թշնամու խոր թիկունքում գործած պարտիզանները, որոնց շարքերում եւս աչքի ընկան հայրուրավոր հայեր՝ ունենալով ինքնուրույն պարտիզանական ջոկատներ։ Միայն Ուկրաինայում եւ Բելառուսիայում մարտնչել է ավելի քան 2000, Դրիմում եւ Զյուսիսային Կովկասում՝ 500, Մերձբալթիկայում, Լեհիստանի եւ Կալինինի մարզերում՝ 200, Ֆրանսիայում՝ 1200, Գերմանիայում՝ ավելի քան 1000, Գերմանիայում՝ շուրջ 800 պարտիզան։ Գոյություն ունեին պարտիզանա-

կան մի քանի ջոկատներ, նույնիսկ գունդ, որոնք կազմավորված էին առավելապես հայերից։ Օրինակ՝ Ուկրաինայում գերմանական զավթիչների դեմ մարտնչել է 100 հոգուց բաղկացած «Հաղթանակ» ջոկատը՝ Մերձեյ Զարուբյանյանի հրամանատարությամբ, եւ 250 հայերից բաղկացած՝ Անաստաս Միկոյանի անվան ջոկատը՝ Արամայիս Զովսեփյանի հրամանատարությամբ։ 80 հայերից էր բաղկացած Լեհիստանի եւ Կալինինի մարզերում գործող պարտիզանական 41-րդ ջոկատը՝ Արտեմ Սաղունյանի գլխավորությամբ։ Դրիմում է մարտնչել 10-րդ պարտիզանական ջոկատը՝ Արամ Տերյանի, Կրասնոդարի երկրամասի Արմյանսկի շրջանի՝ «Ստեփան Շահումյանի անվան ջոկատը»՝ Անդրանիկ Մալխասյանի հրամանատարությամբ։ Ֆրանսիայում է գործել խորհրդային առաջին պարտիզա-

նական ջոկատը՝ Ալեքսանդր Ղազարյանի հրամանատարությամբ։ Գնդի անձնակազմը բաղկացած էր 2000 հոգուց, որից հայեր էին 1200-ը։ Գերմանացիները զործում էր 1000 հայերից բաղկացած «Ազատություն» պարտիզանական ջոկատը՝ Բաբկեն Ներսիսյանի հրամանատարությամբ, Զոլանդիայում՝ 800 հայերից բաղկացած խումբը, ինչպես նաև հոլանդական դիմադրական շարժման աջակցող խմբերը եւ այլն (*Մույն տեղում, էջ 666*)։ Այդ ջոկատների մի մասը, որոնց կազմում կային նաև համալսարանականներ, փախչել են համակենտրոնացման ճամբարներից եւ մասնակցել պարտիզանական շարժմանը։

Իրենց խիզախությամբ առավել աչքի ընկած հայ պարտիզաններից էին Զեմրիկ Զաքարյանը, Վահան Գրիգորյանը (Բելառուսիա), քույր ու եղբայր Զայկ եւ Թամարա Մարտիրոսյանները, Աշոտ Զայրապետյանը (Դրիմ), Կրասնոդարի «Երիտասարդ գվարդիա» կազմակերպության անդամներ Գեորգի (Ժորա) Զարուբյանյանը եւ Մայա Փեխիվանյանը (Ուկրաինա), Արտեմ Պետրոսյանը (Չեխոսլովակիա), Գեորգ Քոլոբյանը, Մկրտիչ Դաշտոյանը (Իտալիա), Բարթոլ Պետրոսյանը, Լեւոն Տիտանյանը (Ֆրանսիա), Անդրանիկ Միրզոյանը (Զոլանդիա), Արարատ Նավոյանը (Լեհաստան) եւ ուրիշներ (*Մույն տեղում*)։

Երկրորդ համաշխարհային պատերազմում տարած հաղթանակում իր ավանդն ունի նաև սփյուռքահայությունը։ Պատերազմի տարիներին սփյուռքահայերի մեծ մասը կողմնորոշվեց դեպի մայր հայրենիքը, համախմբվեց ազգային ճակատի մեջ՝ ստեղծելով մի շարք առաջադիմական կազ-

մակերպություններ եւ ընկերություններ։ Այսպես, օրինակ, ԱՄՆ-ում ստեղծվեցին Զայկական առաջադիմական լիգան եւ Ամերիկայի հայերի ազգային խորհուրդը, Ֆրանսիայում՝ Ֆրանսահայերի ազգային ճակատը, Սիբիրիայում, Լիբանանում, Եգիպտոսում, Եթովպիայում եւ այլ երկրներում՝ հորհրդային Միության բարեկամների ընկերությունները եւ հակաֆաշիստական առաջադիմական կազմակերպությունները, որոնք ամբողջ պատերազմի ընթացքում հետևողականորեն վարում էին հօգուտ ԽՍՀՄ-ի գործունեությունը։ Սփյուռքահայերը ոչ միայն բարոյապես օժանդակեցին մայր հայրենիքին, այլև նյութական զգալի օգնություն ցուցաբերեցին կարմիր բանակին։ Օրինակ՝ սփյուռքահայերի համագնակության շնորհիվ, որը կազմակերպել էր Զայ Առաքելյան Եկեղեցին՝ Ամենայն հայոց կաթողիկոսի տեղապահ Գեորգ Զորեքչյանի նախաձեռնությամբ, պատերազմի տարիներին ստեղծվեց «Սասունցի Դավիթ» տանկային երկու շարայուն (առաջին շարայունն ուներ 21, երկրորդը՝ 22 «Տ-34» մակնիշի տանկեր)։ Բացի դրանից՝ իրանահայերի համագնական գումարների միջոցներով կառուցվեց նաև «Գեներալ Բաղդասյան» տանկային շարայունը (*տես Զայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 666*)։

Նաև բազմաթիվ սփյուռքահայեր ֆաշիզմի դեմ պայքարել են՝ գեներ ձեռքներին։ Միայն ԱՄՆ-ի բանակում մարտնչել է շուրջ 20 000 հայ։ Նրանցից լեյտենանտ Երվանդ Դերվիշյանը պարգևատրվեց ԱՄՆ-ի Կոնգրեսի «Պատվո մեդալով», որն այդ երկրի բարձրագույն պարգևն է։

Շարունակությունը՝ էջ 7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐԱՄԱՆԱԿԵՐՏՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿԻ ԴԱՐՉՎԱԾԲՆԵՐԸ

Սկիզբը՝ էջ 2

Բերենք ռազմի եւ պատերազմի իմաստային դաշտին վերաբերող բառերից կազմված ամենակիրառական դարձվածքների օրինակներ՝ նշելով նրանց բացատրությունը՝ վառելի ի զենս (170) — սպառազինվել, տալ կերակուր սրոյն (254) — սրի մատնել, սրոյ ճարակ տալ (354) — սրի քաշել, մարտիւ պատերազմի սրակոխ առնել (354) — պատերազմելով սրահարել, տնակոտորուքին եւ հրացանութիւնս զեղել (164) — ավերում եւ իրողներն սփռել, հրդեհակեղ լինել (100) — հրդեհից այրվել, մարտ հարկանել (308) — մարտնչել, կռվել, մեծամարտիկ(ս) լինել կամ ելանել (312) — մեծամարտիկ, մեծամարտությամբ կռվել, մեծաձիգ առնել (174) — մեծահարել, մեծի մեծան խոցել, սրակոխ առնել (354) — սրակոտոր անել, սրոյ ճարակ տալ (354) — սրի քաշել, սրով կոտորել եւ այլն։

Մարմնամասեր նշանակող բառերից ստեղծված ԴՄ-ներ

Միջնադարյան հայ մատենագրության եւ պատմագրության մեջ լայն տարածում ունեն մարմնամասեր նշանակող բառերից կազմված դարձվածքները։ Դրասխանակերտցին եւս վարպետորեն կիրառել է այս խմբին պատկանող դարձվածքներ՝ հարստացնելով իր աշխատության լեզուն եւ ոճը։ Մարմնամասեր նշանակող բառերից «Պատմութիւն Զայոց»-ի մեջ հանդիպում են *արին, ակն/աչք, գլուխ, մարմին, ձեռն, երես, լեզու, ունկն* բառերից կազմված հայանի եւ նորագյուտ դարձվածքներ։ Բերենք բնութագրական մի քանի օրինակ՝ *նուաճել կարգել ընդ իւրով ձեռամբ* (28) — ձեռքի տակ զցել, նվաճել, *գրեամբ ածել* (20) — ձեռք զցել, տիրանալ, *զսիրտ կակղել* (170) — գուրը շարժվել, սիրտը փափկել, մտապահել, *առ ոտն հարկանել* (290) — ոտնահարել, արհամարհել, *ձեռն*

լքանել (290) — վիատվել, թեւաթափ լինել, *յականցս հասուցանել* (34) — ականջին հասցնել, լսեցնել, *յական թթափել* (164) — մի ակնթարթում, *զաչս հարկանել* (186) — ուշադիր նայել, *ի գլուխ ելանել* (186) — ավարտվել, ամբողջանալ, *սիրտ ձնել* (188) — խղճահարվել, *ակն ունել* (220) — աչք ունենալ, հուսալ, *ընդ կրունկն դռնալ* (100) — փախչել, նահանջել, *ստանալ ձեռն* (218) — ձեռք բերել, *ի գլուխ ելանել* (210) — գլուխ գալ, ավարտվել, *հոծեալ բերան* (154) — թանձրալեզու, դժվարախոս, *ձեռն ի գլուխ ելանել* (356) — գլխին տալ, փոշմանել, *ձեռնատուր լինել* (102) — անձնատուր լինել, *ձեռնթափ լինել* (164) — թեւաթափ լինել եւ այլն։ Վկայված են նաև *կուռն* մարմնամասից բաղադրված դարձվածքներ, ինչպես՝ *կուռս վառեալս* (312) — լավ սպառազինված։

Ֆիզիկական գործողություններ եւ լինելություն արտահայտող բառերից կազմված ԴՄ-ներ

Բնական է, որ ֆիզիկական գործողություն արտահայտող բայերից կազմված դարձվածքները պետք է ստեղծագործության լեզվում գերակշիռ մաս կազմողներից լինեին, քանի որ Դրասխանակերտցու աշխատությունը Զայաստանում զարգացող պատմական դեպքերի նկարագիրն է, իսկ դարձվածքները հայոց լեզվի զարգացման բոլոր շրջաններում մեծավ մասամբ կազմվում են ֆիզիկական գործողություններ եւ լինելություն նշանակող բայերից, ինչպես օրինակ՝ *առնել, առնուլ, արկանել, բերել, թողուլ, մատնել, վճարել, տալ, լինել/իմ, գոլ* եւ այլն։

Բերենք մեր եզրակացությունն ամրակալող նման մի շարք դարձվածքների օրինակներ՝ *տալ կերակուր սրոյն* (254) — սրի մատնել, *ի ներքս արկանել* (6) — խորանուխ լինել, *արտաքոյ բանից թողուլ* — չի-

շատակել, անտես առնել, *շոգմոզել շողմոթեամբ բանի* (254) — շողողորթել դատարկախոսությամբ, կեղծավորաբար, *յանձն առնուլ* (306) — պատրաստ լինել, ստանձնել, *դեսակն ունել* (332) — ուշադիր սպասել, ակնկալել, *սրոյ ճարակ տալ* (354) — սրի քաշել, *մարտիւ պատերազմի սրակոխ առնել* (354) — պատերազմելով սրահարել, *կոշկոճամահ լինել* (354) — տանջամահ լինել, *մերկանալ մտօք* (364) — ձերբազատվել, մեկուսանալ, *հրաժարել ի կենաց* (92, 184) — մեռնել, վախճանվել, *դուռն բացել* (74) — հուսադրել, *դիւ մատնել* (150) — դիվահարել, զայրացնել, կատաղեցնել, *բերիլ ի կամս* (218) — հնազանդվել, *պետսն վճարել* (186) — կարիքները հոգալ, *հանգչել ի Քրիստոս* (186) — մեռնել, *դիմակ գոլ* (186) — հակառակվել, դիմադրել, *ունել զաթոռն* (186) — զահակալել, *լիզաջինջ առնել* (298) — բնաջնջել, *կապուտ կողպուտ առնել* (298) — կողոպտել եւ այլն։

Միտք, գիտելիք եւ խոսք նշանակող բառերից կազմված ԴՄ-ներ

Մեծ մտավորական ու կաթողիկոսը չէր կարող անմասն մնալ միտք, գիտելիք եւ խոսք նշանակող դարձվածքների կիրառումից, չնայած դրանք թիվը շատ մեծ չէ, սակայն դրանք ունեն կարեւորագույն նշանակություն եւ արժեք։ Զայ մատենագրության մեջ կրթության եւ գիտելիքի դերը միշտ ընդգծված է եղել։ Դրասխանակերտցին, պատմելով հայոց մեծերի վարքը, հատուկ շեշտադրում է նրանց գիտելիքների խորությունը, բանավիճային շնորհը,

ՅՈՒՆԵՍԿՈՒ ԿԵԹՈՂԻԿՈՍԻ

ԴՐԱՄԱՆԱԿԵՐՏՑՈՒՄ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ի լույս ընծայեաց

ՄԿԲՏԻՉ ԻՄԻՆ

Տեսուչ Լ. աղաբեանց Ճեմարանի Լ. Երեւանի Լ. Երեւանցի

ՄԱՍԿՈՎԻՆ

Դ. ԴՐԱՄԱՆԱԿԵՐՏՑՈՒՄ

1853.

իմաստասիրությունը եւ իր պատմության մեջ բազմաթիվ դարձվածքներ է կիրառում, ինչպես օրինակ՝ *ի միտս զետեղել* (208) — մտքում ունենալ, մտապահել, *ի մտի դնել* (254) — մտադրվել, *խորհուրդս խոր թեւակոխել* (366) — մտածնունդների մեջ տուգվել, մտաույզ լինել, *լեզուս ածել* (150) — չարախոսել, բամբասել, *ի միտս վառել* (254) — խանդավառվել, *ի մտի առնուլ* (218) — մտադրվել, *կարծիս ի մտի դնել* (360) — կարծել, *ջան ի մտի դնել* (358) — ջանալ, ջանք անել, ջանք թափել, *ուշ ի կուրծս առնել* (182) — լավ, լրջորեն մտածել եւ այլն։

Շարունակությունը՝ էջ 7

Արեւմտահայոց խաչելության պատումը

Սկիզբը՝ էջ 3

Գիրքը հավերժանալու միջոց է» (Ալաջաջյան Ստ., Չսպիացած վերք, հ. I, գիրք 4-րդ, եր., 1989, էջ 507):

Ալաջաջյանի «Չսպիացած վերք» վեպը մեր ժողովրդի հավերժանալու այն գրեթե մեկն է, որով պիտի պաշտպանվեն նաեւ գալիք սերունդները: Բայց սա այն դեպքում, երբ աշխարհն ինքը կդառնա ազնիվ ու արդար: Ու քանի չի դարձել, գիրքն ու գեներն են մնալու գոյության երաշխավոր:

Ալաջաջյանի քաղաքացիական ազնվությունը նրան մղել է անկեղծ խոսք ասելու նաեւ մեր անցած ճանապարհի վերաբերյալ, նորից ու նորից մեր ժողովրդի ոչ վաղ պատմությունն իմաստավորելու ու վերաիմաստավորելու, այդ թվում եւ թույլ տրված սխալները գիտակցել տալու. «Անգեմ հայ բնակչություն, աղմկող կուսակցություններ, աղոթող երկու կաթողիկոս եւ երկու պատրիարք, երկու ազգային պատվիրակություն, մեկը՝ Փարիզում, մյուսը՝ Պետերբուրգում, գրողներ եւ գրասերներ, եվրոպականամիտ կամ ռուսամիտ մտավորականություն, առեւտրականներ եւ ծերացած հարուստներ, վարժապետներ...» (Ալաջաջյան Ստ., Չսպիացած վերք, հ. III, գիրք 3-րդ, եր., 1993, էջ 398):

Վեպն արդիական է նաեւ նրանով, որ հաստատում է, թե քաղաքական ու ազգային խնդիրները չպիտի դիտել լոկ մերերկրային իրողությունների դիրքերից: Իրադարձությունների զարգացումներն աշխարհում հաճախ կատարվում են մեծ տերությունների հաշվեմատյանների թելադրանքով, եւ դրանք պետք է կարողանալ ճիշտ «կարդալ»:

Այսօր էլ Թուրքիան ապավինում է երկու բանի՝ ուրամալ ցեղասպանությունը կամ արդարացնել այն:

Հիմա մա դեռ կատարում է առաջինը: Երբ աշխարհն ընդունի առաջինը, մա կսկսի երկրորդը՝ արդարացումը: Կատարված ջարդերի ու կոտորածների համար երիտթուրքերը



չդատապարտեցին սուլթան Զամիդին: Իրականացված եղեռնի համար հանրապետական Թուրքիան չմեղադրեց երիտթուրքերին: Նրանց հետնորդները եւս չեն դատապարտելու իրենց նախորդներին:

Գուցե եւ կգան ժամանակներ, երբ աշխարհը հաշիվ կպահանջի ենվերի, Թալեաթի եւ մյուս ջարդարարների կատարածների համար: Բայց առայժմ մարդասպանների թոշները նրանց արձաններն են կանգնեցնում իրենց քաղաքներում (Թալեաթի աճյունը 1943-ին Բեռլինից տեղափոխվեց Կ. Պոլիս, որտեղ կառուցվեց դամբարան, իսկ 1965-ին կանգնեցվեց նրա արձանը):

Ամեն մի գեղարվեստական երկի հաջողության գրավականը հեղինակային լեզուն է: Այս առումով եւս Ալաջաջյանի վեպն առանձնանում է: Գրողը ողջ շարադրանքի ընթացքում դրսևորում է ոչ միայն նյութի ու ասելիքի համակողմանի իմացություն, այլեւ այդ ամենը խոսքի վերածելու չափ ու կշիռ, լեզվական ու ոճական դիպուկ ու հարուստ պատկերավորումներ, մատուցման ու ձեւակերպումների գրավիչ գյուտեր, այլասացություններ: Բազում օրինակներից հիշատակենք միայն մեկը, որն առաջին հայացքից թվում է, թե լոկ բնության մեջ տեղի ունեցող մի երեւոյթի նկարագրություն է. «...ամպի մի ծվեն Սեւ ծովի կողմից, ծովի վրայով, աննկատելիորեն ու անճշտ ժամանեց Ստամբուլի երկինքը: Այնտեղ ծվենը մեծացավ, սեւացավ, ապա ուռեց, իջավ, իջավ մինչեւ որ ծածկեց կանաչ բլուրները, մի ծայրով մխրճվեց Բոսֆորի ջրերի մեջ, մյուս ծայրով՝ Սարմարա ծովը: Հետո միանգամից հեղեղ թափեց քաղաքի վրա, ջրվեժի պես աղմկեց, ապա քամվեց, քամվեց այնքան, որ սմբեց, դատարկվեց» (Ալաջաջյան Ստ., Չսպիացած վերք, հ. I, գիրք 1-ին, Երեւան, 1989, էջ 20):

Վեպի սկզբում տրված այս պատկերից հետո ընթերցողը շուտով կռահում է, որ «աննկատելիորեն» ժամանած այդ տեղատարափը հենց այն սեւ իրադարձություններն են, որ «հեղեղի» ձեւով պիտի իջնեին ու մխրճվեին պոլսահայության գլխին, եւ Ստամբուլի «կանաչ բլուրները» «սմբեին» ու «դատարկվեին»:

Շարունակությունը՝ էջ 8

ՅՆՈՐԿԱՆ ՏԵՐՅԱՆԸ

Սկիզբը՝ էջ 4

«Մոռանալ», «հեռանալ» բառերի առանցքային կրկնաբերումով է գրված «Մոռանալ, մոռանալ ամեն ինչ, // Ամենին մոռանալ» բանաստեղծությունը: Համաբնույթ այլ օրինակներ՝ «Հեկեկում է անվերջ...», «Օ՛, կգան օրեր ավելի տրտում // Ու դժնի, դժնի, առավել դժնի...», «Սեւերով, սեւերով կըպատեն...»:

Տերյանի կրկնաբերումները ոչ միայն բառային են, այլեւ տողային: Իմաստակիր տողը կարող է կրկնվել բոլոր տներում: Այդպիսին է «Ինքնօրորում»-ը:

Տերյանի պատկերները որքան վերացական են, նույնքան նաեւ տեղային են ու առարկայական: Ամեն մի ժամանակաշրջան համեմատությունների իր աշխարհն ունի՝ բնություն, կենդանիներ, աշխարհագրական տարածություններ՝ սար, քար, ծով, գետ... Տերյանը դեռ կտրված չէ անցյալի գիրկն անցնող այդ հատկանշաններից: Դեռ ավելին՝ երբեմն շատ տեսանելի է: Ահա «Մթնշաղի անուրջներ» շարքի 5-րդ բանաստեղծության առաջին տունը.

*Սարի ետեւում շողերը մեռան.
Անուշ դաշտերը պատեց կապույտ մեզ.
Տխուր երեկոն զարկել է վրան.
—Սիրտըս կարոտով կանչում է քեզ, եկ:*

Հայոց բնաշխարհն է՝ սարերի ետեւում մայր մտնող արեգակ, մարող շողեր, սարերին ու դաշտերին իջնող իրիկնային մշուշ եւ հանկարծ՝ «Տխուր երեկոն զարկել է վրան»: Այս վրանը բլուրների վրա իջած քողն է, եւ որը նախորդ տողում ունի իր պատասխանը՝ «Անուշ դաշտերը պատեց կապույտ մեզ», եւ հետեւաբար ամեն ինչ պատված է կապույտով: «Կապույտ վրան» պատկերն առարկայորեն դառնում է տեսանելի: Այլ բանաստեղծություններում պատկերը լրացվում է առարկայորեն դաշտերի վրա իջնող թափանցիկ մութի մանվածք, պարզ ջրերի վրա անդողոջ կանգնած եղեգն: Ընդհանրապես Տերյանի բնաշխարհի պատկերներից հաճախակի են հիշվում սարերը, սարերից կարկաչով իջնող աղբյուրները, դալուկ դաշտերը:

Հիշյալ տան մեջ պատասխան կարող է պահանջել նաեւ «տխուր» մակդիրը. ինչո՞ւ է երեկոն տխուր: Նախ տխրությունը Տերյանի պոեզիայի գերակա տրամադրությունն է, որ այստեղ ձուլվում է իրիկնային ավարտվող օրվան, որ հրաժեշտ է, մի փոքր մահ, եւ ապա տխրության հոգեբանական մախադրյալն սպասումն է՝ «Սիրտս կարոտով կանչում է քեզ, եկ»: Բանաստեղծը շատ լավ գիտի, որ կարոտի կանչը մնալու է անպատասխան, անհասանելի ցնորք աղջիկը չի դառնալու հասանելի: Այստեղից էլ խորացող տխրությունը, որ ծավալվում է մյուս երեք տներում: Ավելանում են վարսաթափ ուռին ու դողդոջուն եղեգնը, փակվող ծաղիկներն ու երկնքում վառվող աստղերը, այսինքն՝ օրը դանդաղ մթնում է, եւ սպասումն արդեն դառնում է «սեւ տագնապ»: Կարոտի կանչը՝ «Սիրտըս կարոտով կանչում է քեզ, եկ», վերածվում է անպատասխան հռետորական հարցի՝ «Արդյոք դու ես դու, իմ անուշ երագ»: Օրը մթնում է, գիշերն է անցնում, եւ սպասումն արդեն իսկ վերածվում է միայնության հոգեվիճակի: Ամփոփիչ չորրորդ տունը դառնում է այս խորացող դրամայի ողբերգական ավարտը.


*Սիրտ իմ, այդ հիմ ես դու իզուր կանչում,
Տես՝ գիշերն անցավ, աստղերը մեռան,
Մենավոր իմ սիրտ, մոլորված թռչում,
Կարոտիդ կանչը չի հասնի նրան...*

Ահա մի բանաստեղծություն, որ տեսանելի է եւ «ներսից», եւ «դրսից», որի եւ «արտաքին» շերտն է երեւում, եւ «ներքին»:

Տերյանի բառը միշտ տեղին է: «Երեկո» (1908) բանաստեղծության մեջ օգտագործել է «տխրադալուկ» բառը՝ «Կրծքիս դիր դեմքը քո տխրադալուկ»: Այս բառից պետք է ծնվեր Չարենցի առաջին գրքի վերնագիրը՝ «Երեք երգ տխրադալուկ աղջկան» (1914): Արտառոց կարող է թվալ, ասենք, այսպիսի բառի օգտագործումը՝ «Ես կանգնած եմ վայրի ժայռի կատարին»: Անդրադարձը՝ ժայռը, բնականորեն, վայրի է լինում, ավելորդ կամ անտեղի չէ՞ այդ բառը:

Բառի ընկալումը շատ ենթակայական է, առավել եւս՝ գեղարվեստական խոսքում: Անգամ սովորական անհատական գիտակցության մեջ է այն տարբեր, էլ դու մնաց խորապես ինքնատիպ բանաստեղծական այնպիսի համակարգում, որպիսին Տերյանի պոզիան է:

Ահա մեկ օրինակ կյանքի փաստից: Ուսուցիչն աշակերտներին հանձնարարում է թվարկել բառեր, որոնք ունենան ուրախ իմաստ: Այլեւայլ պատասխանների հետ մի աշակերտ ասում է՝ «Ճանապարհ», եւ ինչո՞ւ հարցին հավելում, որ ճանապարհով իր հայրիկն



ամեն տարեվերջին արտագնա աշխատանքից տուն էր վերադառնում: Ուսուցիչը պահանջում է թվարկել տխուր բովանդակություն ունեցող բառեր, եւ նույն այս աշակերտը տալիս է նույն պատասխանը՝ «Ճանապարհ», ու բացատրում, որ իր հայրիկը եկած ճանապարհով գնաց, գնաց ու այլեւս չվերադարձավ:

Այսպես խորապես անհատական է բառը Տերյանի համակարգում՝ հենց թեկուզ «մթնշաղ» եւ «անուրջ»:

«Մթնշաղը» Կարինի բարբառում տարածված էր, կար ժողովրդախոսակցական բառապաշարի մեջ. Տերյանն այն գրականացրեց եւ դրեց չափազանց գրական, գրեթե չօգտագործվող այնպիսի մի բառի կողքին, որպիսին «անուրջն» է: Այս բառերը լիցքավորվեցին խորապես անհատական ապրումներով եւ դարձան ոչ միայն վերնագիր (գրքի, շարքի), այլեւ բանաստեղծական համակարգի գեղարվեստական միջուկ՝ իրենց շղթայական ճեղքումներով:

Այդպես նաեւ՝ «ցնորք», «տեսիլք», «աշուն», «միայնություն», «թախիծ»...

Բառի խորապես անհատական ընկալումը կարելի է ցույց տալ երկու համակարգերի համեմատությամբ. Թուրքական ժողովրդախոսակցական լեզվում շատ սովորական, անգամ շատ հարազատ է հնչում դիմելու «աղջի» ձեւը՝ «աղջի, Անուշ»: Տերյանը երբեք «աղջի» չի ասի, քանի որ իր բարձրաշխարհիկ գրական լեզվի համակարգը կավերվի, լավագույն դեպքում մա կարող է օգտագործել «աղջիկ» բառաձեւը եւ այն էլ ոչ թե դիմելիս, այլ խոսքի նկարագրական պատկերաշարում:

Տերյանը երգեցիկ բանաստեղծությունը հասցրեց անթերի կատարելության: Հայերենի վանկական համակարգին, ինչպես արդեն նշեցինք, ավելացրեց վանկաշեռտական համակարգը, երբ տողերը չափական կշռույթի են հասնում ոչ թե սոսկ վանկերի հավասարությամբ, այլ կայուն դիրքերում գտնվող շեշտերի: Այստեղ արդեն ոչ թե բարդ ոտքերի համաչափությունն է, այլ պարզ ոտքերի՝ հիմնականում անապետայն՝ եռավանկ, վերջին շեշտով: Սրան էլ ավելանում է հանգերի հարուստ հնչեղությունը, երբեմն նաեւ՝ առձայնույթն ու բաղաձայնույթը, եւ խոսքի կախարդանքը պատրաստ է.

*Ոչ տրտմնեց, ոչ մրմունջ սգավոր,
Հեռացիր, մոռացիր ինձ հավետ.
Իմ ուղին միշտ մթին, մենավոր,
Կրգնամ իմ դժկամ ցավի հետ:*

Սա երգ է, եւ այս երգի մեղեդին բառերի կշռույթի մեջ է: Յուրաքանչյուր տուն բաղկացած է ինը վանկից՝ 9=3+3+3, կիրառված է անապետայն ոտք, ինչն էլ տողերն օժտել է երեքական ոչ միայն բառային, այլեւ կշռույթային շեշտով: Ավելացնենք, որ կշռույթային շեշտը շատ ավելի զորավոր է, քան բառայինը եւ հարկ եղած դեպքում կարող է անգամ բառերը կիսել:

Տերյանի հանգը, հանգագիտությունը, խոսքի ձայնակարգությունը եւս առանձնացող են: Հնչյունների նրբագեղությունը մշտապես վերածվում է նույնաձայն մեղեդու, առավել չափով բաղաձայնույթի («Շշուկ ու շրշուն»): Համուն խոսքի մեղմ ներդաշնակության՝ Տերյանը խուսափում է ցայտուն հանգաբանությունից:

Առանձին խոսակցության նյութ է Տերյանի լեզուն: Լեզուն որպես ոչ թե սոսկ տեղեկատվության, այլ գեղարվեստական հաղորդակցության միջոց, այլ կերպ՝ որպես պատկերային մտածողության համակարգ, որ ստեղծում է իր ոճական ինքնուրույնությունն ու ինքնատիպությունը: Լեզվական բյուրեղյա մաքրությամբ, ինչպես ամենամաքուր աղանձնոր, Տերյանի լեզուն արեւելյան աշխարհաբարի բարձրակետն է: Այդ լեզուն գեղարվեստական լեզու է դառնում նրա որոշակի գեղագիտությամբ, ինչն էլ ստեղծում է նրա բանարվեստը, օտար բառով՝ պոետիկան: Այդ ամենն ստանում է որոշակի ձեւ եւ բովանդակություն, ինչն էլ դառնում է նրա խոսքի ոճը եւ ստեղծում է իր անհատական կնիքը:

Շարունակելի

Դավիթ ԳԱՄՊՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Սկիզբը՝ էջ 5

Պատերազմական տարիներին այդ պարգևին արժանացել է 87 մարդ: Ամերիկյան ռազմաօդային ուժերի խիզախ օդաչուներին շարքում էին շարլզ Տերտերյանը, Սեն Պարսմանյանը, Զորք Զորքորյանը (33 ազգային հերոս): Ամերիկյան բանակի գեներալներ դարձան Զորք Մարտիկյանը, Հայկ Շեքերջյանը, Զոն Աբաշյանը, Սարգիս Զարգարյանը, սիրիական բանակում աչքի ընկան Արամ Կարամանլիկյանը, Բուլղարիայում՝ Գաբրիել Գաբրիելյանը եւ ուրիշներ: Շուրջ 30 000 հայ կար Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի բանակներում, որոնց մի մասը զորակոչված էր եգիպտոսից, Սիրիայից, Լիբանանից եւ այլ երկրներից: Անգլիայի եւ Ֆրանսիայի երկնքում են հերոսացել ռազմական օդաչուներ Նոյե, Զեկ եւ Եւոն Աղազարյան եղբայրները, որոնցից առաջինը զոհվել է Անգլիայում, իսկ երկրորդը՝ Ֆրանսիայում կատարած մարտական թռիչքների ժամանակ (*նույն տեղում*): Նրանց քույր՝ Մոնիկ Աղազարյանը, պատերազմի ժամանակ ռազմական օդանավակայանի պատասխանատու ծառայող էր:

Հագարավոր սփյուռքահայեր ընդգրկված էին ֆաշիստական Գերմանիայի կողմից զավթված երկրների դիմադրական-պարտիզանական շարժման շարքերում: Իր անմատ սխարանքով Ֆրանսիայում հռչակվեց Սիսաք Մանուչյանը, որը հետմահու արժանացավ Ֆրանսիայի հերոսի կոչման: Մ. Մանուչյանը 1943 թ. մարտից Փարիզի շրջանում գործող «Ստալինգրադ» խմբակուրի, իսկ նույն թվականի մայիսից Փարիզի ու Ֆրանկի շրջանի պարտիզանական ինտերնացիոնալ ջոկատների հրամանատարն էր: 1943 թ. նոյեմբերի 16-ին նա մատնությամբ ձերբակալվեց ֆաշիստների կողմից և 1944 թ. փետրվարի 21-ին իր 23 զինակիցների հետ գնդակահարվեց: Հայ ռազմագերիներին ֆաշիստական գերությունից ազատելուն մեծապես օգնեցին աշխարհառջակ երգիչ և Հայաստանի ազգային հերոս Հառլ Ազնավուրի ծնողները՝ Սիբայել և Քնար Ազնավուրյանները, ըստիկ Սիդախ, և անձամբ Հառլ Ազնավուրը: Հանուն Ֆրանսիայի՝ իրենց կյանքը գոհեցին հա



Ժողովրդի անվեհեր զավակներ Լուիզա (Լաա) եւ Արփիար Ասլանյանները:

Ավելի քան 300 հայորդի ընկավ Յունաստանի պարտիզանական կռիվներում եւ դիմադրական պայքարում: Ամբողջ Բուլղարիայով մեկ թնդաց հերոսուհի պարտիզան Սաշկայի (Յերմինե Ռազգրադյանի) անունը, որին ֆաշիստները դաժան խոշտանգումներ րից հետո կախաղան հանեցին (*մոյն տեղում*):

Սփյուռքահայության միայն չնչին մասը չմիացավ հայ ազգային ճակատի ուժերին: Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության հեղավարներից ոմանք Բեռլինում ստեղծեցին «Հայ ազգային խորհուրդ»՝ Արտաշես Աբեղյանի նախագահությամբ: Խորհրդի անդամներից էին Աբրահամ Գյուլխանդանյանը (փոխնախագահ), Հարություն Բաղդասարյանը (քարտուղար), Գարեգին Նժդեհը, Դրաստուհան Կանայանը (Դոռ), Կահան Փափազյանը (Կոմս) եւ ուրիշներ: Խորհուրդը գործում էր ֆաշիստական Գերմանիայի կողմից զավթված ԽՍՀՄ-ի արեւելյան շրջանների նախարարության հովանավորության ներքո, որի հիմնական նպատակը Կովկասում գերմանական իշխանության հաստատումն էր եւ այն իրականացնելու համար գերմանական բանակի կազմում հայկական լեգեոնի ստեղծ-

ծնունդ: Նժդեհն ու Դրոն այդ գործին լծվեցին հայ ռազմագետիներին փրկելու նպատակով: Նրանք շրջում էին ռազմագետիների ճամբարներում եւ հավաքագրում հայ զինվորներին ու սպաներին: Ընդհանուր առմամբ հաջողվեց հավաքագրել 8000–9000 մարդու՝ ստեղծելով Հայկական լեգեոնի 10 գումարտակ (*Մույն տեղում*, էջ 668): Հատկանշական է, որ ռայխսկանցիներ Զերման Գյորինգն իր «Կանաչ թղթապանակում» ֆաշիստական զորապետներին հրահանգել էր. «Կովկասում բնիկների (վրացիների, հայերի, թաթարների եւ այլն) եւ ռուսների միջեւ եղած հակասությունները պետք է օգտագործել հօգուտ մեր շահերի՝ հաշվի առնելով հայերի անբարյացակամությունը մեր նկատմամբ» (*Մույն տեղում*): Գերմանացիների նկատմամբ հայերի անբարյացակամության մասին նշել է նաեւ Աղոյի Հիտլերը: 1942 թ. ամբողջառաջնակով ազգային լեգեոնների կազմավորման հարցին՝ նա հայտարարել է. «Հզիւտեմ, թե ինչպես իրենց կպահեն վրացիները: Նրանք թուրքական ժողովուրդների թվին չեն պատկանում: Ես միայն մոռսուվաններին եմ վստահելի համարում: Այդ զուտ կովկասյան գումարտակների կազմակերպումը համարում եմ չափազանց վտանգավոր գործ, բայց միայն մոռսուվանական զորամասեր ստեղծելու մեջ ոչ մի վտանգ չեմ տեսնում... Չնայած

Իռզեմբերգի եւ զինվորականների հավաստիացումներին» եւ հայերին չեն վստահում» (Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 669): Հիտլերի այդ մտավախությունն անհիմն չէր: Եւ լա լավ հասկանում էր, որ հայ ժողովրդի մեջ դեռ թարմ էին 1915 թ. ռդբերգական իրադարձությունները, երբ թուրքական կառավարությունը Գերմանիայի անմիջական հովանավորությամբ ծրագրված իրագործեց Հայոց ցեղասպանությունը: Չմական Հիտլերի մտավախությամբ՝ գերմանական բանակի կազմում խորհրդային ռազմագերիներից ստեղծվեցին ազգային լեգեոններ: Անմիջապես նշենք, որ հայ լեգեոնականների մեծ մասը թշնամաբար էր տրամադրված գերմանացիների նկատմամբ եւ մտադիր չէր մարտնչել նրանք համար: Նրանց զգալի մասը գերմանացի զինվորի համազգեստի էր հագել՝ շատ թե քիչ մեղմելու ռազմագերու թշվառ վիճակը, իսկ հարկ եղած պահին՝ անցնելու ռազմաճակատի գիծը՝ միանալով կարմիր բանակին կամ պարտիզաններին: Ինչպես վկայում են փաստերը, ռազմաճակատ փոխադրված զումարտակների անձնակազմերի մեծ մասը կամ միացավ պարտիզաններին (այսպես կազմակերպվեց Ուկրաինայում Անաստաս Միկոյանի անվան հայկական պարտիզանական ջոկատը), կամ անցավ ռազմաճակատի գիծը՝ շարունակելով մարտնչել կարմիր բանակի շարքերում: Իսկ լեգեոնականների այն զումարտակները, որոնց տեղափոխվեցին Ֆրանսիա, հիմք դարձան խորհրդային պարտիզանական առաջին զնդի կազմավորմանը: Նման կերպ վարվեցին նաեւ Հոլանդիա եւ Յուլանդստան տեղափոխված հայկական զումարտակները: Այսպիսով՝ իտիտլականների կողմից ստեղծված Հայկական լեգեոնի ստորաբաժանումները ոչ միայն չծառայեցին ֆաշիստական վերմախտին, այլեւ դարձան խորհրդային պարտիզանական ջոկատների, ֆրանսիական, հոլանդական, հունական դիմարտական շարժումների համալրման աղբյուրներ:

Շարունակելի

Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ
Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՎՀԱՆԵՍ ԴԼՍԻԱՆԿԵՐՏՑՈՒ
«ՊԼՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՐ ԴԱԶԿԱԾՔՆԵՐԸ

Այնպիսով՝ էջ 2, 5

Վերելուն նշված իմաստային դաշտերին պատկանող դարձվածքները ամենակիրառական են մեր ուսումնասիրած սկզբնաղբյուրում, սակայն գտել ենք մեռ այլ իմաստային դաշտերին պատկանող զխաղաս բառերից կազմված ուշագրավ դարձվածքներ, որոնք բնութագրիչ կառուցատիպերը կներկայացնենք ստորև:

Շարժում, տեղափոխություն, փոխադրում նշանակող բառերից ստեղծված ՊՄՆԵՐ՝ արտաքոյ կացուցանել (178) — դուրս բերել, հեռացնել, **ի բաց ընկենուլ** (364) — դնել նետել, հեռացնել, **ի բաց հանել** (114) — կտրել, **ի բաց խտուրդել** (284) — հեռացնել, վանել, **մերձ հասուցանել** (198) — մոտեցնել, բարեկամացնել եւ այլն:

Տուն, տեղ, բնակավայր նշանակող բառերից կազմված ԴՄ-ների՝ զշինություն աշխարհի տնօրինել (10) — աշխարհաշեն գործեր կատարել, շինանիստ շինուած (8) — կատարյալ կառույց, շինություն, մտանել յաշխարհս (147) — գրավել եւ այլն:

Կրոնի եւ հավատալիքների դաշտին վերաբերող ԴՄ-ներ՝ հօտ Տեառն (170) — Աստուծո հօտ, հավատացյալների հօտ, **Աստուծոյ այր** (116) — հոգեւորական, **Աստուծային Գիր** (74) — Աստվածաշունչ, **հոգեւոր առաջաստ** (150) — մայր եկեղեցի, **հանգչելի ի Քրիստոս** (186) — մեռնել, **երկիր պագանել** (34) — երկրպագութիւն անել, երկրպագել, **յետին թռչակ** (344) — հաղորդութիւն, որ տրվում է մահամեծծ իվանդին եւ այլն:

Ժամանականիշ բառերից կազմված դարձվածքներ՝ ծախել զժամանակս (8) — ժամանակը վատնել, զուր անցկացնել, **վճա-**

ԴԵԼ ՎՅՈՒՄ ԿԵՆՈՑ (110) – ավարտել կյանքի օրերը:

Մեր հետազոտության մյուս դարձած դարձվածքների ռճական կիրառությունների յուրահատկություններն ի ցույց դնելու համար Հովհաննես Դրասխանակերտցու պատմությունից բերենք բնագրային գեղեցիկ օրինակներ.

— Իսկ նոցա անարգել մոլեզնութեամբ զմռախտող ստուերաց խաւարի զանձամբ արկեալ՝ զոր միանգամ գտանէին զճանապարհայն **սրոյ ճարակ տային**՝ զզգօն եւ զանապարտ քահանայսն, եւ զերկրագործ մշկանս, եւ զխաշմարածսն, եւ զճանապարհորդսն, եւ զաղքատսն եւս (354):

— Իսկ ապա երկաքանչիւրքն կողմանք զօր
գումարեալ գումոյ կազմեալ՝ իբր հրոսանուէր
իմոյ դրոյմամբ **մարտ** ընդ միմեանս **հարկա-
նէին** (308):

— Եւ՛ ի նոցանէն ոչ ինչ սակաւ ծախս ռոճկաց ըստ իւրաքանչիւրումս սակի կարգէր մեզ պարտապանաբար վճարելով զպէտս ամենեցունց. եւ անտի լելեալ գնացաք՝ ի կողմանս Գուգարացոց եւ անդ բնակեցաք՝ **սկսնելով** իրկութենս մերոյ՝ ի Տեառնէ (220):

— Ապա Ատրոմերսեի եւ Հասանն տեսեալ,
եթ խորհուրդ սպանմանն ոչ ել ի գլուխ՝ ահա
երկիւղի զմոսա պատեալ պաշարեալ էր.
ստեպ ստեպ ապա յաւարի առեալ զորս **ի**
ձեռն ընթնեցաւ, այլ եւ զկապսի բազում որ
եղեալ պահէր յամրոցին Աճի՝ փակեալս յա-
ւուրսն Տայոյ չուլայ անդ անկամէին (210):

— Եւ ապա թագաւորն **ընդ կրօնկն դարձեալ** վաղվաղէ չուէ գնայ ընդ դուռն Դվինն քաղաքին. եւ անդ բազում արեան ճապաղիս՝

ի նոցանէն հեղեալ եւ առհասարակ յաւարի առեալ զնոսա՝ հնազանդեցուցանէր զամբարտաւան եւ զքիրտ ապստամբութիւն նոցա ընդ լծով ծառայութեան իւրոյ (308):

— Արդ՝ այս այսպես իրագործեալ, քան-
զի որպէս նկանակն Գեղեճնի դարծեալ հո-
լովեալ՝ ի բանակն այլագեաց եւ **լիգաշինք**
զնոսա **արարեալ**՝ ինքն Աշոտ եղբարն իւրով
դառնալ զմայ խնդութեամբ եւ յաղթութեամբ
բազմաւ եւ մեծաւ աաարաւ զկողմամբք Վրաց
աշխարհին առ յաւես սիրեցեալն իւրեանց
իշխանն Գուրգեն (298):

— Չոմանս ի սուր սուսերի եւ ի սլաքս մետից եւ ի տէգս ճիգակաց հաշեալ մաշեալ սատակէին. զոմանս իսկ ձերբակալ արարեալ զվառակինոսսն սատակէին. եւ զոմանց զոմնչս եւ զակաւմնս կտրէին. իսկ ի ջրիստոնեայս խմայեալ **կապուտ կողոլարուտ արարեալ** զնոսա թողոլին երթալ զնալ ի բաց, եւ գրեթէ ոչ ոք ի նոցանէ ճողոպրեալ զնոսա թողոլին երթալ զնալ ի բաց, եւ գրեթէ ոչ ոք ի նոցանէ ճողոպրեալ գտանէր, բայց միայն Վասակն սակաւ արամբք փիախստեայ անկեալ յամրոցն Շամշոյղէ (298):

— Եւ համդերձեալ դաիճացն զերեց եղբայրն կատարել սրով, նա աղաչանս մոցա մատուցանէր՝ նախ զկրտսերն քան զինքն տալ կերակուր սրոյն. **ի մտի եղեալ** եթ զուցէ ի վերջ քան զնա մնալով՝ ըստ մանուկ տիոցն զարիւրեցնի ինչ յիմայլեան սրոյն սպառնալեացն, — վասնզի մրազարդ մորուքն ի ծնօտսն դեռեա եր տիգեալ եւ ընծիլդեալ — Եւ դարձեալ յեղբայրն կոյս ասէր... (254):

— Վասն որոյ ապա Հասանն խոհական իմացութիւն ուէ ի կողծս արարեալ եւ գիտացեալ ոչ այլ ինչ իւրք փրկիլ նոցա յայնմանէ (որ բացեալ երեւեր դուռն կորստեան) եւ կազդուրեալ

ի կամս երկնաւոր այցելութեանն, խնդրէ յետկար երդման յկիշնէ, զի տացէ նմա զամրոցն եւ առ ի նմանէ զտցէ աներկիւղութիւն արեան եւ ամենայն չար ամպրոպաց (182):

— **Ի բաց ընկենուլ** զթագաւորն իւրեանց,
եւ պարսիկ անէլ ունող աշխարհիս (364):

— Սակայն ոչ ըստ գեղջկաց անարուեստից երկրորդեալ զայն ինչ զոր նախ քան զմեզ քաջք եւ բանաստեղծք արգոյակապք եւ զարմանալիք զարժանի բան պատմութեան անտուստ ի վերուստ արձանագրեցին զյայտապատում իրս թագաւորաց եւ զպայազատութիւն իշխանաց եւ զհանգամանս պատերազմաց եւ **զշինանիստ շինուածս** քաղաքաց եւ զաւառաց, գեղից եւ գերդաստանաց... (8):

— Եւ այսպէս իբրեւ հրով զմիտս նոցա վառեալ՝ զամենեցուն լեզուս շարժեր յօրհնութիւնս ամենեցունցն Աստուծոյ, պնդակազմ զնա առնելով ի մշտնջենաւոր աղօթսն. եւ ապա մատուցեալ զսարսափելի զպատարագն զառ ի Քրիստոս, եւ զխորհուրդն փրկական մարդկան բաշխեր առհասարակ արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց եւ ամենայն չափու հասակի խորհրդակցան աւանդութեամբ՝ ըստ սակի **յետին բոշակի (334)**:

— Եւ արդ մի եւս ինձ այլ յիրս յառաջարկ-
նութեանս եղիցի **ծախել զգամանակս**։ Վասն
զի ծերութիւն ցաւագին մահ առ դուրս պատ-
րաստ ունի, եւ տագնապ տարակուսիցս
հապճեպ տայ պատմել զանցս անցից աղե-
տիցս եւ անհնարին խռովութեանց հասելոց
կայելոց զնէ (8)։

Շարունակելի

Սամվել ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Հայերեն վիմագրերի աղբյուրագիտական արժեք

Վիճնադարյան Հայաստանի պատմության ուսումնասիրման համար հավաստի սկզբնաղբյուրներ են հայերեն վիմագրերը, որոնց վաղագույն մոտ 2-3-րդ դարերը են հասել դեռևս վաղ միջնադարից (Տեկոր, Երուսաղեմ, Ավան, Արուճ, Դվին, Թալին, Բագարան, Էջմիածին եւ այլն)։ Այդ վիմագրերն առավելագույն փորագրված են հողեւոր շինությունների՝ մեծ ու փոքր եկեղեցիների, հետագայում մեծ գա-

զավորի կամ կաթողիկոսի, երբեմն էլ նշանավոր այլ առաջնորդների գահակալման տարիների մասնավորեցմամբ։ Օրինակ՝ Արուճի տաճարի շինարարության ստույգ թվականը որոշվում է բյուզանդական Կոստանդ կայսեր (641–668) գահակալման տարիների հիմամբ, որն ըստ վիմագրի՝ տեղի է ունեցել նրա գահակալման Ի եւ Ա (21-րդ) տարում (իրականում նշված է Ի եւ Թ, ինչը սխալ է), այսինքն՝ 662 թ. (նկ. 1)։

Համանման են մեծ Վաղարշապատի Ս. Հռիփսիմե տաճարի շինարարական զույգ արձանագրությունները, որոնցում նշված են Կոմիտաս Ա. Աղցեցի կաթողիկոսի (615–628) ամուսնը եւ նրա օրոք տաճարի կառուցումը, բայց ոչ երբեք ստույգ թվականը։ Այս դեպքում այն որոշակիացվում է մատենագրական աղբյուրների միջոցով. պատմագիր Սեբեոսի հաղորդմամբ՝ Սասանյան արքա Խոսրով Այրվեզի գահակալման Ի եւ Ը (28-րդ) տարում կառուցվեց Ս. Հռիփսիմե տաճարը, իսկ Խոսրով Այրվեզը (Փարվեզ) գահակալել է 590–628 թթ., հետևաբար նրա թագավորության 28-րդ տարին համապատասխանում է 618 թվականին, որն էլ համարվում է տաճարի կառուցման թվականը (նկ. 2)։



Նկ. 1 Արուճի տաճարի շինարարական արձանագրությունը, 662 թ.

վիթ-սրահների, գրատների, զանգակատների, սեղանատների եւ օժանդակ այլ շինությունների պատերին եւ հիմնականում բովանդակում են շինարարական զանազան աշխատանքներ, նվիրատվություններ, հարկատվություն կամ ապահարկում, իրավական տարաբնույթ նորմերի հաստատում եւ այլ գործառնություններ։ Մեծաթիվ են հատկապես հիշատակագրությունները, որոնցից շատերը պահպանվել են ոչ միայն եկեղեցական կառույցների որմնախաչերին կից, այլեւ կոթողային հուշարձանների՝ խաչքարերի ու տապանաքարերի վրա։ դրանք հիմնականում ի Տեր ուղղված գրություններ են, որոնցում ակնկալվում է հիշատակված անձի (ամենայն հոգու փրկության համար Աստծու բարեխոսությունը)։

Վաղմիջնադարյան վիմագրերը հիմնականում շինարարական բնույթի վավերագրեր են՝ փորագրված հայ հնագրության մեջ հայտնի *երկաթագիր* կոչվող խոշոր տառատեսակներով։ դրանք տեղ են գտել ինչպես եկեղեցիների արտաքին պատերի տեսանելի հատվածներում (Վաղարշապատի Ս. Հռիփսիմե, Արուճի Ս. Գրիգոր, Մաստարայի Ս. Հովհաննես եւ այլն), այնպես էլ մեկ տողով գտնվող եւ ողջ կառույցը (Աշտարակի Կարմրավոր, Եղվարդի բազիլիկ, Բագարանի Ս. Թեոդորոս եւ այլն)։ Այս շրջանի վիմագրերում համառոտագրությունները, կցագրերն ու փակագրերը խիստ հազվադեպ են, իսկ թվականն ընդհանրապես բացակայում է, որի փոխարեն ժամանակը որոշվում է վիմագրում հիշատակված թա-

նյան արքա Խոսրով Այրվեզի գահակալման Ի եւ Ը (28-րդ) տարում կառուցվեց Ս. Հռիփսիմե տաճարը, իսկ Խոսրով Այրվեզը (Փարվեզ) գահակալել է 590–628 թթ., հետևաբար նրա թագավորության 28-րդ տարին համապատասխանում է 618 թվականին, որն էլ համարվում է տաճարի կառուցման թվականը (նկ. 2)։



Նկ. 2 Ս. Հռիփսիմե տաճարի շինարարական արձանագրությունը, 7-րդ դարի սկիզբ

Մեզ հայտնի ստույգ թվական ունեցող հայերեն վաղագույն արձանագրությունը Թալինի Կաթողիկե եկեղեցու Հայոց ՄԼԲ՝ (783) թվականը կրող վկայագիրն է, համաձայն որի՝ Ուխտատուր վանականն ու նրա եղբայր Տուսին Թալինն ապահովել են ջրով եւ այդ առթիվ արձանագրություն կազմել։

9–11-րդ դարերից մեզ հասած վիմագրերի թիվն ամիսամեծապես ավելին է։ Ի տարբերություն վաղմիջնադարյան վիմագրերի՝ նշված շրջանին հարազատ արձանագրությունների թե՛ տառաձեւերը, թե՛ բովանդակությունը եւս էապես տարբեր են. դրանք

առավել ընդարձակ են, մեծ մասամբ թվակիր, օգտագործվել են մեծ վիմագրերին հատուկ սղագրության բոլոր բաղադրիչները (համառոտագիր, կցագիր, փակագիր), որոնք առավել լայն տարածում են գտել բուն միջնադարի՝ 12–14-րդ դդ. վիմագրերում։ Արաբական խալիֆայության թուլացումից հետո, երբ Հայաստանում հաստատվեց Բագրատունյաց թագավորությունը (884/5 թ.), վերագրվեց ապրեց մեծ հոգեւոր-մշակութային կյանքը, եւ վաղմիջնա-



Նկ. 3 Թեոդոսյաց վանքի վաղմիջնադարյան եկեղեցու 2014 թ. պեղումներից հայտնաբերված արձանագրության բեկոր, 13–14-րդ դդ.

դարյան սրբավայրերի տեղում եւ դրանց կից, մեկը մյուսին հաջորդելով, կառուցվեցին վանական խոշոր համալիրներ՝ Սանահին, Հաղբատ, Տաթև, Կեչառիս, Հաղարծին, Գոշավանք, Մակարավանք, Որոտնավանք, Հաղիճավանք, Մարմաշեն, Խծկոնք, Բագնայր եւ այլն։ Սրանք բոլորն էլ ունեին սովորական միաբանություն եւ էական դեր էին խաղում երկրի հոգեւոր արժեքների պահպանման ու զարգացման գործում։ Հայ վիմագրության զգալի մասը հենց նշված վանական համալիրներից է, որոնք հիմնականում ընդարձակ, վարժ ու համաչափ փորագրությամբ տարաբնույթ վավերագրեր են։ Հարկ է նշել, որ հայ վիմագրության

պարիորդ-տեղագիրները՝ Սարգիս եպս Զալալյանցը, Հովհաննես եպս Շահխաթունյանցը, հայր Ղեւոնդ Ալիշանը, Մեսրոպ արք. Սմբատյանցը, Մեսրոպ Մագիստրոս Տեր-Մովսիսյանը, Աբել արք. Մխիթարյանցը եւ այլք, ինչպես մեծ մեծ անվանի հայագետները՝ Նիկողայոս Մառը, Հովսեփ Օրբելին, Սեդրակ Բարխուդարյանը, Կարո Ղաֆարյանը, Գրիգոր Գրիգորյանը եւ այլք, ուստի ուրախալի է, որ մեր օրերում եւս այդ կարեւոր վավերագրերը խնամքով ընդօրինակվում ու հրատարակվում են՝ ի նպաստ հայ աղբյուրագիտության զարգացման։

Ինչ վերաբերում է վիմագրերի ընդօրինակման սկզբունքներին, ապա հայ վիմագրագիտության մեջ ընդունվել են համարվում Ն. Մառի եւ Հ. Օրբելու՝ դեռևս մախորդ դարասկզբին Անիի վիմագրերի ընդօրինակման եւ հրատարակության համար մշակված մեթոդները, այն է՝ արձանագրություններն ընդօրինակել առանց բնագիրն աղավաղելու, սղունները, ինչպես մեծ վնասված ու ջարդված տառերը վերականգնել հատուկ պայմանական նշաններով, վերանություններին կցել բնագրի գրչանկարը, ապա՝ լուսանկարը։ Նշված սկզբունքների կիրառմամբ էլ վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանը կյանքի կոչեց «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի հրատարակությունը, որի առաջին հատորն ի պատիվ ուսուցչի՝ Հովսեփ Օրբելու, նվիրեց Անիի վիմագրերին։ Մինչ օրս լույս է տեսել մատենաշարի 10 հատոր, որոշներն էլ պատրաստվում են տպագրության՝ վիմագրագետներ Գագիկ Սարգսյանի (Կոտայքի մարզ), Աշոտ Մանուկյանի (Արագածոտնի մարզ) եւ մեր (Արմավիրի մարզ) աշխատասիրությամբ։

Արսեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Արեւմտահայոց խաչելության պատումը

Սկիզբը՝ էջ 3, 6

Առհասարակ պետք է նշել, որ թեւ վեպի էջերի մեծ մասը վերաբերում է մի կարճ ժամանակահատվածում տեղի ունեցած քաղաքական ու ազգամիջյան դեպքերին, աշխարհին պատուհասած պատմական փաստերի վերհանումներին, սակայն հեղինակը չի տրվում լոկ այդ ահավոր երեւոյթներն արձանագրողի գայթակղությանը։ Նրա ամեն մի խոսք, ամեն մի տող շաղախված են զգայական ու հուզական տարրերով, գայրոյթի, ընդվզման, ցավի ու մորմոքի արտահայտություններով, որոնք փոխանցվում են ընթերցողին, պարուրում նրան, եւ այդ ամենն արեւելահայերենի եւ արեւմտահայերենի ընտիր զուգադրություններով։

Նշենք մտէ, որ Ալաջաջանը, իրեն միայն հայտնի իմացականությամբ, կարողանում է ընթերցողին «տեղափոխել» պատմական այդ ժամանակաշրջան, հետ տանել նրան 20-րդ դարի առաջին տասնամյակներ, նրան ուղղակի կերպով «մասնակից» դարձնել ծավալվող իրադարձություններին, անգամ «ականատեսն» ու «վկան» դարձնել։ Այս համաներկայության գաղտնիքներից մեկն այն է, որ հենց ինքը՝ հեղինակը, առանց միջ-

նորդավորման «մասնակիցն» է եղել այդ ամենին իր գերդաստանի պատմությամբ ու իր անձնական կենսագրությամբ։ Գաղտնիքի բացատրություններից մեկն էլ այն է, որ Ալաջաջանը լայն առումով քաջատեղյակ է աշխարհաքաղաքական խարդավանքներին, թուրքիայում դարերից ի վեր զարգացող մեծագոյություններին, այդ երկրի մայրաքաղաքում՝ Կ. Պոլսում, եւ թուրքիայի մի երկրորդ «մայրաքաղաք» դարձած Բեռլինում նյութվող սադրանքներին, պոլսահայության կյանքի մանրամասներին եւ, ամենակարեւորը, իր սրտի թրթռներից ու ջերմությունից անթեղված Արեւմտահայաստանի եւ Կիլիկիայի բնակավայրերի, բնության, մարդկանց, կենդանական ու բուսական աշխարհների կանչերին։ Գիւղի մի ինքնագրույցը՝ «հայի զգացումը հայ խոսքի մեջ ամփոփել», շատ հարմար է գալիս ողջ վեպը բնութագրելու համար։

Ալաջաջանն օգտագործում է մեծ նուրբ հումոր. խոսելով դաշնակից երկրների մարտանավերի մասին, որ մասնակցում էին Դարդանելի նեղուցի գրավմանը, գրում է, որ նրանք «...արագաշարժ կրիաների պես պեղեցին ջրերը» (ընդգծումը. — Ա. Ա.)։

Եվ կամ սարկազմի օրինակ՝ այդ մարտանավերից շատերը կրում են հավակնոտ ու ամբարտաւան անվանումներ՝ թարգմանաբար՝ անդիմադրելի, անճկելի, վսեմաշուք, վրեժ..., որոնք բոլորն էլ, ինչպես գրում է հեղինակը, *ականների զոհեր դարձան*։

Ահա այս ամենի հաշվառմամբ է, որ Ալաջաջանի գրականությանը լավատեղյակ գրականագետ Սեւակ Արզումանյանը 2008-ին տպագրած իր «Ստեփան Ալաջաջան» գրքում այս գործն իրավացիորեն համարել է «հայ արդի վեպի հաջողված էջերից մեկը» (Արզումանյան Ս., Ստեփան Ալաջաջան, Եր., 2008, էջ 116)։

Ասվածին հավելենք՝ ընթերցողին վերահրատարակությամբ ներկայացվող այս վեպը, որ իյուսվել է հեղինակի արցունքներից, եւ որը կարելի է գլխագրով «Ձոն» անվանել իր բոլոր իմաստներով՝ հուշարձան, հուշաքար, կոթող, վեմ..., դեռ երկար ճանապարհ ունի անցնելիք՝ ի հիշատակ Հայոց եղեռնի բոլոր նահատակների եւ ի գիտություն գալիք սերունդներին։

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՔՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Քրիստոնյա Հայաստան»

թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հեռախոս՝ (010) 517 280

Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 31.07.2020 թ.

Տպաքանակը՝ 1175